

Փ Ի Զ Ի Կ Ա Յ Ի
Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ի Գ Ի Ր Ք

ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՅՈԹՆԱՄՅԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

VII ՏԱՐԻ

Ա.Ի.Ա.ԶԻՒՆ ՍԵՄԵՆՈՎ


22 DEC 2017

-412 -

-1-

Գ. Ի. ՖԱԼԵՅԵՎ

ՖԻԶԻԿԱՅԻ
Ո.ՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ



VII ՏԱՐԻ

ԱՌԱՋԻՆ ՍԵՄԵՍՔ

Խաչմ. Ա. ԹԱՐԱՆՅԱՆ
յեղ Վ. ԱԲՐՈՀԱՄՅԱՆ

Լուսումներակ յեղ Փափոխութեակ Խմբագրեցիք
ԱՐՀ. ՏԱՆՅԱՆ յեղ ՀԹԳՀ. ՆԱԳԱԿԱՏԻԿՅԱՆ

ՊԵՏՐՈՎ

1932

ՅԵՐԵՎԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մոտ հարյուր տարի սրանից առաջ մի շաբթ գիտնականների և դրատարների կողեկտիվ աշխատանքով հնարքեց մի մեջենա, վորի ոգնությամբ մեխանիկական եներգիան հնարավոր եր փոխարկել ելեկ-

Անցավ հարյուր տարի, և չկա այժմ յերկրագնդի վրա մի գալք, վարտեղ ծանոթ չվնեն ելեկտրականությանը, վորտեղ ելեկտրականությունը չկատարի այս կամ այն աշխատանքը: Հեռագրալարերը, վորանցով կայծակի արագությամբ հեռազրեր են արվում մի կայանից մյուսը, փողոցների, գործարանների և տների ելեկտրական լուսավորությունը, ելեկտրոմատորները, վոր շարժման մեջ են գնում գործարանների դաշտահները և զյուղատնտեսական մեքենաները, ելեկտրաքարշը, վոր շարժում և գնացքը յերկաթուղով և ելեկտրական գութանը, վոր վարում և դաշտը, ելեկտրական աննշան փոքրության լամպը, վորով բժիշկը լուսավորում և հիվանդի մարմանի ներքին խոռոչները և հոկայական մեծության լուսարձակը, վոր յերկնքում վորոնում և թրշնամու ինքնաթիռները, ելեկտրական գանգը վորպես տան սահմաններում աղղանշան տվող և ռադիո-աղղանշանները, վորոնք ուղարկվում են ովկիանոսի հեռավիր շոգենավից, — այս բոլորն ելեկտրականության տարրեր աշխատանքներն են:

Ելեկտրական եներգիայի բազմակողմանի կիրառությունները, նրանից ոգտվելու և նրան հեռավորության վրա հաղորդելու հարմարությունները վոչ միայն հնարավոր դարձրին, վոր ելեկտրական եներգիան մուտք գործի արդյունաբերության բոլոր ճյուղերը և պրակտիկ կիանքը, այլև խնդիր են առաջադրում արդյունաբերության մեջ գործադրվող այլ տեսակի եներգիաները փոխարինել ելեկտրական եներգիայով:

Զեր առաջ դրվում և հետաքրքիր խնդիր՝ ծանոթանալ ելեկտրականության տեխնիկական տարրեր կիրառություններին, մեքենաներին, վորոնք մեխանիկական եներգիան ձևափոխում են ելեկտրականի և, վոր ամենակարևորն ե, մեր յերկրի ելեկտրիֆիկացիայի հսկա պլանին, վորի մասին, անշուշտ, առաջին անդամը չե, վոր լսում եք:

Պետքանի ուղարք
Կազմված 7093 (բ)
Հրատ. № 2046
Պատվեր № 393
Տիպ. 6000



11-273858

Արքագրեց Սոս Հակոբյան

Համեմատ և արտադրության 1/II 1932 թ. Ձ. Բ

Արքագրված և սպագրելու 19-ին մայիսի 1932 թ.

Աշխատանքը մենք կրածանենք լերկու մասի՝ առաջին ժամում, վոր պետք և մշակենք տղյալ սեմեստրում, մենք՝

1) կղարզենք, թե ինչ և ելեկտրիֆիկացիան և ինչումն և կայանում նրա ընդհանուր պղանը,

2) մի շաբ փորձերի և աշխատանքների ընթացքում կծանոթանք ելեկտրական հոսանքի հետ կապված զանազան լերեւէթներին,

3) կուսումնասիրենք ելեկտրականության միքանի տեխնիկական կիրառությունները և կծանոթանանք, թե ինչպես են հաշվում ելեկտրական եներգիան:

Այս հարցերը, վորոնք վերաբերում են դինամոմեքենայի կազմության, ելեկտրակայաններին և եներգիայի հետազորության վրա հաղորդելուն, կազմեն լերկորդ սեմեստրի կուրսի բովանդակության մի,

ԵՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԵՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՅԵՎ ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ԵՆԵՐԳԻԱ

Նախընթաց կուրսերում ձեր կողմից ուսումնասիրված շարժիչներից ամեն մեկը, սկսած քամու շարժիչներից և վերջացրած ներքին ալրման շարժիչներով, ունի իր առավելությունները, վորի հետևանքով միքանի տառնձին գեղքերում նրանք գործածվում են, գերադասվելով ու շարժիչներից, բայց ունի նաև իր թերությունները:

Ըստհանուր թերությունները, վոր հատուկ և այս բոլոր շարժիչներին և վորը սահմանափակում են նրանց գործածությունը, այդ այն և, վոր նրանց եներգիան հնարավոր չեն հաղորդել մեծ հետազորության վրա:

Յեզ իսկապես, շարժիչների եներգիան մեղ համար արժեք ունի այն չափով, վոր չափով նա կարող է շարժման մեջ դնել մեր գործարանների դազգահանները: Իսկ շոգեմեքենայի կամ ներքին ալրման շարժիչների եներգիայի հաղորդումը կարող ենք իրագործել միայն փոկային, կամ տառնձավոր փոխանցման միջոցով:

Փոխանցման թե մեկ և թե մյուս ձեւը պահանջում են, վոր դաշտահանները և շարժիչներն ըստ հնարավորին իրար մոտ լինեն, քանի վոր նույնիսկ փոկային փոխանցման սահմանը 10 մետր և:

Յեթե փոկը փոխարինենք հաստ պարանով (ճողանով), շարժիչի և դաշտահի փոկանիմւերի վրա ակոսներ պատրաստենք պարանների համար, առա հեռավորությունը կարելի լի հասցնել ամենաշատը 25 մետրի: Բայց արդեն այս, համեմատաբար փոքր հեռավորությունների վրա, փոխանցումն ահապին տեղ և բռնում, մանավանդ լերը գաղղահները շատ են: Մեծ արագությամբ շարժվում են բազմաթիվ փոկեր, վորոնք շատ տեղ են բռնում և մեծ վտանգ են ներկայացնում: Դժբախտ գեղքերից

Խուսափելու համար անհրաժեշտ և փոկերը վանդակապատել, վորն ավելի մեծածավալ և դարձնում փոկային փոխանցումը (նկ. 1):

Յերկրորդ և կարեւոր թերությունն այն և, վոր բոլոր այդ շարժիչները ձեռնտու ին միայն այն ժամանակի, լերը մեծ հզորություն ունեն: Հզորությունը պակասելիս նրանց ոգտակար գործողության գործա-



Նկ. 1. Փոկային փոխանցում:

կիցն (արդաստիքը) ուժեղ չափով ընկնում և: Ճիշտ և, ներքին այրման շարժիչները վորով չափով ազատ են այդ թերությունից, բայց նրանք ել թույլ չեն առաջ հզորությունը պակասեցնել ավելի քան մի վորով սահման, վորը հավասար և միքանի ձիու ուժի հզորություն:

XIX դարի լերկորդ կեսի վերջում գտնվեց մի լեզուական եներգիալի բոլոր մյուս ձեւերը փոխարկելու ելեկտրական եներգիալի:

Քանի վոր ելեկտրական եներգիան հնարավոր և առանց զգալի կորըստի հաղորդել մեծ հեռավորության վրա, ապա միայն այդ հանգամանքն արդեն ապահովեց ելեկտրական եներգիալի առավելությունն եներգիալի հանդեպ:

Արտադրական կենտրոնում գործարաններն եներգիալի կորիք

ունեն, իսկ նրանից հետու, վորենե խուլ անկյունում, եներգիալի մեծ պաշտը կա՝ տորֆալին ճահիճներ, սրբնթաց գլուխը, ածուխի, փալտի և այլ վառելանլութերի պաշարը ինարկե, վառելանլութը կարելի լի փախտել գործարան, բայց դա ծախս և պահանջում, յերեմի փոխազդելը կարող և ավելի թանգ նստել, քան վառելանլութը ինչ վերաբերում և զետի ջրի եներգիային, ապա այն կարելի լի ոգտագործել միայն իր տեղում, աճա այսուղ և, վ. բ միանդամից յերեան և գալիս ելեկտրական եներգիալի առավելութունը, ծահճի կամ գետի վրա ելեկտրակայան են կառուցում և տեղում ունեցած եժան եներգիան փոխարկում են ելեկտրական եներգիալի. այդ եներգիան հազորդալարերով հազորդում են այնտեղ, ուր նրա կարիքը կա, թեթև, անշարժ պղնձե հազորդալարերն ելեկտրական եներգիան հազորդում են ելեկտրակայանից սպասողին, վորը համար կալանից հարցուրավոր կիլոմետրեր ւեռու յի գտնվում, նույն հազորդալարերը, վորոնք գրեթե աեղ չեն բռնում, եներգիան տանում են զեպի առանձին գաղղահնարը. Դործարանն ելեկտրական եներգիան ստանալով՝ ոգտագործում և վոչ միայն գաղցահները գործի գնելու, այլև ելեկտրական լուսավորության և, յեթե պետք և, տաքության համար, Հետազոտում դուք կտեսնեք, վոր ելեկտրական եներգիան հեշտությամբ փոխարկվում և ամեն մի այլ տեսակի եներգիայի:


Եներգիալի հսկայական պաշարներ, վորոնք առաջ սպասարկուն կորչում ելին, այժմ ելեկտրոկայանների միջոցով ոգտագործվում են արդյունաբերության մեջ. Այսպիս շինված և վոլտովի հիդրոելեկտրոկայանը, վորը վոլտովից եներգիան հազորդում և լինինգրադ՝ 100 կիլոմետրից ավելի հեռավորության վրա. այսպես պետք և աշխատի Դնեպրոստոյլ, Դնեպրից եներգիան ուղարկելով Ռուսական զանազան շրջանները, այսպես պետք և աշխատեն բազութիվ հիդրոելեկտրոկայաններ կովկասում, Ռուսական և Սուրբիում. Բացի հիդրոելեկտրոկայաններից կան մի շարք կալաններ, վորոնք աշխատում են տորֆով, յած վորակի ածուխով (Կաշիբա) և արտադրության թափթփուկներով (Շտերովկա). Այսպիս և աշխատում Շատուրյան կայանը (նկ. 2) տալով Մուկվալին հեռավոր տորֆալին ճահիճների եներգիան:

Ն. Ն. Յ. Ա. Ե. Կ. Տ. Ի. Ֆ. Ի. Կ. Ա. Յ. Ա. Յ. Ա. Յ. Ա. Յ.

Նախընթաց հողվածում դուք տեսաք, վոր տարբեր տեսակի կայաններ են ոգտագործվում եներգիալի տարբեր տեսակներն ելեկտրական եներգիալի փոխարկելու համար:

Վոլտովի կայանը, Դնեպրոստրոյլ, կովկասի և այլ վալրերի մի շարք կալաններ ոգտվում են այն գետերի եներգիայից, վորոնց վրա նրանք

կառուցված են: Շատուրի կայանը և մի շարք այլ կայաններ, վորոնց մասին գութ կգտնեք Գ. Մ. Կրժիժանովսկու գրքում (տես ներքեց), ոգտվում են տորֆալին ճահիճների ջերմային եներգիայից, վորոնց վրա շինված են այդ կայանները: Ուրիշ կայաններ ոգտվում են եներգիալի այլ աղբյուրներից, վորոնց նրանք անմիջապես մոտ են գտնվում: Անհնար և ոգտագործել գետերի և ճահիճների եներգիան առանց այն ելեկտրական եներգիալի փոխարկելու: Շրջանացին կենտրոնական



Նկ. 2. Շատուրի պետական ելեկտրոկայանի կաթուայանոցը:

կայաններն արդյունաբերությանը տալիս են միքանի հարյուր հազար կիլովատտ եներգիա: Կենտրոնական կայանների այդ եներգիան խնայում և արժեքավոր վառելանլութը, վորը պետք և ծախսվեր արդյունաբերության մեջ, մյուս կողմից ել տրանսպորտը հարկադրված չի լինում վառելանլութն արդյունահանման վայրերից տեղափոխել արդյունաբերական կենտրոնները: Այդ գնու բավական չե: Արջանացին կայանները լերկիրը ծածկելով հազորդալարերի խիտ ցանցով՝ եներգիա կտան այնպիսի վալրերին, վորոնք յերեկ նույնիսկ մեխանիկական եներգիա շեն գործածել:

Վողջ արագագը ության հիմնական տեսակների սպասարկումն ելեկտրական եներգիայով, վոր ստացվում և նրա աղբյուրների մոտ գտընվազ միքանի հողը կայաններից և հազորդալարերով փոխազդվում գործածության վալրը, ահա սա յի ելեկտրիֆիկացիան, վորն ինչպես

Վ. ի. Անհնան և ասում, պետք ե բարձրացնի մեր լեռկըի տնտեսությունը և մեր լեռկըրը մոտեցնի սոցիալիզմին:

Թե վորքան մեծ նշանակություն եր տալիս վաղիմիր իլլիչն եւեկարիփկացիալին, կարելի լե տեսնել հետևյալից:

1917 թվին մեր Միության սահմաններում կար միայն մի շրջանակին կայան, ընդհանուր ոգտագործման համար: Դա «Ելեկտրոսպերեգտախան» կայանն եր, վորս աշխատում եր տեղական տորֆով և իր եներգիան ուղարկում եր Մոսկվա, ճանապարհին ընդորկելով մեծ շրջան: Այդ կայանի հզորությունը 20.000 կիլովտու եր: Մյուս ելեկտրոսպերի անհերն ունելին նեղ, մասնակի նշանակություն: Որինակ՝ մի կայան կար, վորս հոսանք եր տալիս միայն Մոսկվայի Մեծ և Փոքր թատրոններին:

1920 թվին, հենց վոր հնարավորություն և ստեղծվում զբաղվելու մեր տնտեսության վերակառուցումով, վաղիմիր իլլիչն առաջ և քառու ելեկտրիփիկացիալի գաղափարը:

Համառուսական կ. Գ. Կ.-ի առաջին ստացրջանի VII հավաքին, վոր տեղի ունեցավ 1920 թվի փետրվար 2—7-ին, ընդունվեց բանաձև, վորի մեջ ելեկտրիփիկացիալի վերաբերյալ ասված և հետեւալը. «Նկատի առնելով ելեկտրիփիկացիալի առաջնակարգ նշանակությունները՝ հիմնական բնական պաշարների ոգտագործման ինդուստրիան առաջընթացի առաջնական նախարարը պահպանության մեջ մոտ և վորոնք կարող են ամենից ավելի կատարելագործման ձևով եներգիան ելեկտրահաղործման ցանցով բաշխել ամրող լեռկըրում, գնահատելով ելեկտրիփիկացիալի նշանակությունն արդյունաբերության, հողագործության, տրանսպորտի և բնակչության կուլտուրական կարիքների բավարարման համար, հատկապես խորհրդային նույսաստանի գյուղացիության լայն մասսաների համար առաջ տարվող հնարավորությանն ոգտվելու ելեկտրական երերգիալի լուսավորական և ուժական հաղորդաւարերով իրենց հիմնական կարիքների բավարարման համար և այդպիսով խոշոր առաջիւազացում կատարել գյուղը քաղաքի կուլտուրական բարիքներին հազորդակից դարձնելու խնդրում և բարձրացնել գյուղացների գյուղացներությունը և գյուղացիական ալլ զբաղմունքերը: Համառուսական կ. Գ. Կ. վարչուց հանձնարել Ժ. Գ. Խ.-ին Հողժողկոմատի հետ միասին ելեկտրական կայանների ցանցի կառաւցման համար նախադիմ մշտել և վոչ ուշ քան միջև լեռկըր ամիս մացնել Փողկոմիորի ի հաստատություն»:

Խորհուրդների VIII համագումարին այդ պլանն արդին մշտկված եր: Ահա թե ինչ և ասել Վլադիմիր Իլլիչն ելեկտրիփիկացիալի պլանի առթիվ Խորհուրդների VIII համագումարում:

«Դուք կտեք պետական հանձնաժողովի զեկուցումն ելեկտրիփիկացիալի մասին: այդ հանձնաժողովը կազմված է 1920 թվի փետրվարի 7-ին Համառուսական կ. Գ. Կ.-ի վորոշմամբ: Փետրվարի 27-ին Ժ. Գ. Խ. ստորագրեց վերջնական վորոշումն այդ հանձնաժողովի հաղթի մասին և Ժ. Գ. Խ.-ի, Հաղորդակցության կոմիսարիատի և Հողժողկոմատի մի շաբթ լուսագույն մասնագետներ և աշխատավորներ, թվով 100-ից ավելի, ամբողջապես նվիրվեցին այդ գործին: Մեր առաջ գրված են Բուռառուսական ելեկտրիփիկացիան Պետական հանձնաժողովովի աշխատանքների արդյունքներն ահա այս հատորիկի մեջ... Յետ հույս ունեմ, վոր գուք չեք վախճան այս հատորիկից: Յես կարծում եմ ինձ դրժվար չի մեղ համոզնել, վոր այս հատորիկն առանձնահատուկ նշանատկությունների ունի: Իմ կարծիքով սա մեր լեռկըրող կուսօծքիքին ե»:

Խորհուրդների համառուսական IX համագումարը հաստատեց ելեկտրիփիկացիալի պլանը:

Վորաբենզի մանրամասն ծանոթանանք ելեկտրիփիկացիալի հակառակություն, ուշադրությամբ մշտել առաջապես վերջունները:

Առաջադրություններ

I. Գծեցեք Միության քարտեզը և ուղարկուի Բողուշակու «Հինգտարաց ճետո» և Գ. Մ. Կըժիժանովսկու «ԽՍՀՄ-ի ժողովրդատանական շինարարության հնգամատ պլան» գրքերից, նշանակեցնք քարտեզի վեա կայանները, վորոնք պետք և ավարտված լինեն հնդումատիք, վերջին:

II. Նույն գրքերով մեր Միության յուրաքանչյուր պլանի համար հաշվեցեք կառուցվող կացանների հզորությունը և արդյունքն արտահայտեցեք դիագրամները:

III. Նույն գրքով պարզեցեք, թե այդ կայաններից յուրաքանչյուրն եներգիալի ինչ ազգուր պետք և ոգտագործի և դասավորեցեք այդ կայաններն ըստ նրանց ծախուած եներգիալի տեսակների: Արդյունքն արտահայտեցեք դիագրամները:

IV. Թերթերով և հանդիսներով հետեւցնք կայանների կառաւցմանը, դրան վերաբերող աշխատանքի լուսանկարները և թերթերից ու հանդիսներից կարած նյութերը դասավորեցնք ալրոմի մեջ՝ կառաւցման աշխատանքների ընթացքը և արդյունքը ներկայացնելու նպատակով:

Առաջապես արդյունքների արդյունքները զեկուցեք խմբում, զննական դիագրամներով լուսաբանելով քարտեզների և լուսանկարների միջացով: ԽՍՀՄ-ի ժողովրդատանական շինարարության հնդումատ պլանի

քարտեզը կարևոր իւ գտնել Գ. Մ. Կրժիժանովսկու «ԽՍՀՄ-ի ժողովրդականության շինարարության հնդամյա պլանը» գրքում:

Ի՞նչ կարդալ տվյալ գիյում ռուսակած հարցերի մասին

Գ. Մ. Կրժիժանովսկու «ԽՍՀՄ-ի ժողովրդականության շինարարության հնդամյա պլանը»:

Գ. Լ. Ալաբուգին «ԽՍՀՄ-ի եկեղեցի ֆիկացիան» (առանձին հոդված՝ առանձին հարցերի վերաբերյալ):

Կահայինսկի և Խաղեղով «Ի՞նչ է եկեղեցի ֆիկացիան» գլուխներ |, II, III, VI և VII:

Ա. Մ. Զալկով «Հերոսական Շատուրա» գլուխներ |—XIII և XXIII:

Վ. Բագրաշոսկի «Հինգ տարուց հետո» 128—137 լիրես:

Սիմաշանսկի «Եներգիան և նրա ոգտագործումը» 184—188 և XIV գլուխ 194—204 լիրես. ԽՍՀՄ-ի եկեղեցի ֆիկացիան:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՀՈՍԱՆՔԻ ՄԱՍԻՆ

ՏԵՂԱԿԱՆ ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՀՈՏՍՎԱՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

Ակսելով եկեղեցական եներգիայի ուսումնասիրությունը՝ նախ և առաջ ձանոթանք տեղական լուսավորության ցանցին:

Այդ նպատակով եքսկուրսիա կատարենք հենց գպրոցի պատերի մեջ և հետազոտենք տեղական եկեղեցական լուսավորության ցանցը։ Այդ եքսկուրսիան մեզ կտա առաջին առաջարրություններն եկեղեցականությունից, իսկ եկեղեցականության հետագա ուսումնասիրության ընթացքում հաճախ կվերադառնանք մեր ցանցին և, ուսումնասիրելով այն, կաշխատենք հասկանալ նրա առանձին ձասերի գերը։

Եքսկուրսիան սկսեք հենց պատահած առաջին լամպից և լարերի ուղղությամբ զնալով դանենք այն տեղը, վորանդից մուտք և գարծում շենքի մեջ։

1. Գտեք այն տեղը, վորանդ հոսանքը մտնում է շենքը։

2. Ի՞նչու լարերը տեղավորված են չուզունե տուփի մեջ։

3. Խնդրեցեք բաց անել արկողը, վորի մեջ են մտել լարերը և ուշադրությամբ դիմեցեք նրա կազմությունն առանց ձեռք տալու կամ վորեն առարկալով շոշափելու այն միացումները, վոր դուք տեսնում եք արկողի մեջ։

4. Նկարեցեք այն տուարկաները, վոր տեսնում եք արկողում։

Կենտրոնական կայանից լեկած հաղորդալարերը ճյուղավորվում են քաղաքում և նրանց միանում են տներում լեկած լարերը։ Թաղաքով անցնող լարերը կ'չվում են մագիստրալ, հենց այդ մագիստրալին միանում են գպրոցական ցանցի լարերը։ Հատակի մոտով անցնող լարերը հեշտությամբ կարող են դիմում դեղութեր տեղի ունենալ։ Վորովսկի լարերը չմասնակի անգամ առաջնային դիմում դեղութեր տեղի ունենալ։ Վորովսկի լարերը չմասնակի անգամ առաջնային դիմում դեղութեր տեղի ունենալ։

Արկղաւմ անզավորված են հասոցը, վորը դպրոցական ցանցը միացաւ և ձափստարակին, և ապահովիչ խցանները:

Անջատելով հատքը կամ կայսերները, կարելի է տաջտել դպրութեան ցանցը՝ ըստ կամ ցանցը՝ ըստ կամ ցանցից:

5. Հոստանքի ճանապարհին վրան և հաջորդ առարկան;

6. Բայզ գեր և կատարում նա:

7. Հաշվեցալիքի աղակու հետևում թվանշանները փոխվեմ ևս, թե
վոչ:

Նշունակեցեք այն թիվը, վորը հիմա տեսնում եք. նայեցեք նաև

8. Քանի՞ լար և մանուշ հաշվեցուցի մեջ և քանիսն և պուլս գալիս:


9. Հետո մեր են անցնում լարերը (բաշխիչ տուի):
10. Բանելու առ է ծառը:

16. Բաբոր լար և ստուգմ այդ տուքի մեջ և քանիսը դուրս գալիս:
17. Քանին լար և միանում լուրաքանչչուր լամպին:

Տեղաւոր նշանակեցեք այն հարցերը, վոր դուք կցանկանալիք մասնաւոր ռուսականիրել:

ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՇԱՔԱ

Եղեկաբական հոսանքը կայանից հաղորդալարերով մտնում է լամպի թելի մեջ, թելը շիկացնում և և լամպը լուս և տալիս նույն լուսութեաբականի լի զիտել, լիթե գրպանի լաղաների փոքրիկ լումպը միացնենք գրպանի լապտերի մարտկոցի հաղորդալարերին:



Եղ. 3. Լամպի և մարտկոցի միացման
ուրվագիծը:

պը տնցնում և հա-
կոբդալսրով: Եղեկորական ևներգիալի աղբյուրը և հներգիալի ընդու-
նիչը միացնելով հաղորդալարերի միջոցով՝ ստանում ենք ելեկորական
զթա, Քանի վոր հետագայում դուք պետք ե գծադրեք զանազան շըզ-
թաներ, առա պայմանավորվենք այդ զթաները զծադրել ուրվագծո-
րեն, պատկերացնելով զթալի մեջ մտնող դործի ըները հատուկ նշան-


Ներով: Մեր շղթան, վոր կազմված և զրաւանի: մարտկոցից, լամպերից և հաղորդալարերից, պատկերացված և Յ-րդ նկարում: Այս ռարվագծում մարտկոցն ու լամպը պատկերացված են - պահմանական նշաններով, իսկ հաղորդալարեր՝ մի շարք ուղիղ ոճերով: Եկեղացականության վերաբերող առաջին փորձի համար ձեր վերցրած դոքելիքները պետք ե հաճախակի գործադրվեն հետագայում, այդ պատճառով ել հարկավոր և նբանց հետ մանրամասն ծանոթանալ:

ԳՐԳՈՆԻ ՄԱՐՏԿՈՑ

Քանդեցեք մի հին, փշացած մարտկոց, դանակով զգուշութեամբ
 հեռացնելով նրա թղթե պատոցը (նկ. 4): Դուք աեսնում եք, վոր
 մարտկոցը կազմված է ցինկե 3 փոք-
 րիկ գլաններից, վորոնք շատ տեղե-
 րում արդեն քայգալված են: Զգուշու-
 թեամբ աշխատելով մատներդ չմասսել,
 դանակով հանեք այդ զլաններից մե-
 կը և բաժանեցեք մասերի: Գլանի ներ-
 ուը գանձում ե քաթանի պարկ, վորը
 լցված ե մանգան դիօքսիդի և ածու-
 խի խառնուրդով, գերջինիս մեջ ամուր
 պահված և մի կլոր ածուխ, վորի դուրս
 ցցված ծալրին հագցրած և մի պղնձե
 գլանարկ: Ցինկե գլանների միջև գըր-
 ված են ստվարաթղթի կտորներ, իսկ
 ամեն մի գլանը լարով միացրած է հա-
 րեան գլանի ածուխի պղնձե գլխարկին: Արտաքին գլաններից մեկը
 ցինկին և միուսի պղնձե գլխարկին ամրացրած են թիթեզւա շերտակ-
 ներ, Յեթե դուք առիթ ունենացիք քանդելու վճ բուռովին փշացած
 մարտկոց, ապա կնկատելիք, վոր մանգան դիօքսիդ պարունակով պար-
 կի և ցինկի միջև լցված և ինչպո՞ք չը: Այդ շրերը պատրաստած և
 անուշաղը լուծուցիթից և ալլուրից, վիրջինս խառնած և նրա համար,
 վոր անուշաղը լուծուցիթը թանձր լինի և մարտկոցից չփափի: Ալլու-
 րը մարտկոցի աշխատանքում վճ մի դեր չի խաղում: Այդ ցիրեք զը-
 լանները նրանց մեջ զրկած ածուխներով ներկալացնում են մարտկո-
 ցիկի առանձին ելեմնաները և բոլորն ել միատեսակ ևն պատրաստ-
 ված (5-րդ նկարը պատկերացնում է համարկած ելեմնար և նրա ա-
 ռանձին մասերը):

Վաճառքում կարելի լի գտնել այդ սխառհմի ավելի խոշոր եղէ մենաւներ, վարժնք կոչվում են Լելլաների ելումնեներ։ Նրանք կտպմված են

հատակ չունեցող ցինկի գլանից և պարկի մեջ դրված ածուխից, վորը շրջապատված է մանգան դիրքսիդով: Ծինկի գլանը դնում են մի տպակի անոթի մեջ, այդ գլանի մեջ տեղափորում պարկը մանգան զի-




Նկ. 5. Հավաքած էլեմենտը և նրա առանձին մասերը:

ոքսիդով և ածուխով և անոթի մեջ լցնում անուշաղը լուծուցի: Այնուհետև էեկլանշելի ելեմենտն արդեն պատրաստ եղործածության համար: Հետագալում մենք հաճախ կոգավենք ինչպես էեկլանշելի առանձին ելեմենտից, նույնպես և այդ ելեմենտից կազմված մարտկոցից, ժիացնելով նրանց այնպես, ինչպես միացած են գրպանի մարտկոցից կում: Ալդպիսի միացումը կոչվում է հաջորդական միացում:

ԵԼԵԿՏՐՈԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ելեկտրական լամպի զիմավոր մասն են մետաղի թելը, վորը գտնվում են ապակե փակ գնդանոթի մեջ (նկ. 6): Թելի ծալքերը լերկու լարերի միջոցով զողած (լնեմած) են՝ մեկը լամպի մետաղի կոթի պտուտակածե ակրոխն, իսկ մյուսը՝ լամպի կոթի ներքեմի մետաղի զըլիսարկին: Ակոսի և գլխարկի միջև գտնվում են հատուկ նյութ, վորը նրանց իրարից բաժանում են: Շիկացման սովորական լամպը տարբերվում է գրպանի լապտերի լամպից միայն մեծությամբ: Այդ լամպի թելը շատ ավելի լերկար և կախված է մետաղի կարթերից, վորոնք ներդողված են ապակի ձողին (նկ. 7): Թելի ծալքերը զողած են

լերկու ավելի հաստ լարերի հետ: Այդ լարերը զողած են՝ մեկը լամպի կոթի պտուտակածե ակոսի, մյուսը՝ կոթի մետաղի հատակի հետ: Այս լամպի մեջ են պտուտակածե ակոսը և կոթի հատակին իրարից բաժանված են: Քանի վոր թելն ողի մեջ շիկանալիս կարող եք աշխարհի ապա, ինչուես նաև զրպանի լամպում, թելը տեղափորված է ապակի գունդ անոթի մեջ, վորից ողը հանված է:



Նկ. 6. Գրպանի լամպերի լամպը նկարի մատակերի մասը պատկերացված է թելի միացումը և նկարությունը կոթի հատակին:




Նկ. 7. Ելեկտրական լամպ:

Կ Ո Ւ Ա. Ա.

Գրպանի լամպը հոսանքի շղթայի մեջ ներառելու (մացնելու) համար կարելի է այնպես անել, վոր մարտկոցի հաղորդալարերից մեկը շոշափի կոթի պտուտակածե ակոսը, իսկ մյուսը՝ կոթի հատակը: Բայց այդ ձևի ներառումը շատ անհարմար է, ուստի գրպանի լամպի համար կլինենք հատուկ կոթառ*): Կամ ցեթե ցանկանանք ոդտվել լամպից առանց կոթառի լամպի մետաղական ակոսին և հատակին կղողենք պղնձե հաղորդալարեր: Սովորական լամպը հոսանքի մեջ մացնելու համար պտուելով մտցնում են հատուկ կոթառի մեջ: Կոթառի ներքին մասը (նկ. 9) կազմված է հախճապակի մարմնից, վորի վրա ամբարցած են յերկու մետաղի մասեր՝ մեկը Պ պտուտակային փորվածքը,

*) Գրպանի լամպի կոթառը պտուտասում ենք մի կտոր պղնձե մերկ լարից, փաթթելով մատաշի վրա 3—4 փաթի: Այսպիս պետք է փաթթել մատաշուած ձևորում պահելով, ձախով բռնեցներ լարը: Մատիաց գրեք լարի վրա և այլ ցուցամատով լարի ծայրը սեղմեցնեք մատաշին: Մատիաց պատացնելով դեպի ձևու լարը փաթթեցնեք սատաշի ծայրը: Սատաշը պարույրը մեխերով ամրացնեք տախտակին, այդ պարույրի կննորոնում տախտակի մեջ պատելով մացրեք մի կտոր գլուխ պտուտակ նրա վրա սեղմելով պղնձե լարի յերկրորդ կտորը: Պարույրը նրա համար է, վոր լամպը նրա մեջ մացնեն, իսկ պտուտակը պետք է ըոշափի լամպի հատակի գլանարկն:

Վորք հարժաքնեցվում է լամպի ակոսին պառաւակածե, իսկ մյուսը՝ մետաղի Ա սլուզը, վորք շոշափում և լամպի մետաղի հատակը, յերբ լամպը մտցված է կոթառի մեջ: Կոթառի տրդ յերկու մետաղի մասերն ունեն սեղմակներ, վորոնց ամրացվում են ցանցի հաղորդալարերը: (Դրանք լապտերի մեջ կոթառը պարզեցրած է, նրա մեջ կա միան պառաւակածե ակոս լամպի կոթի համար: Լամպի մետաղի հատակին անմիջապես մոտենում է մարտկոցի յերկար թիթեղը):



Նկ. 9. Կոթառի ներքին մասը Հ—համապակի, Գ—պառաւակածե ակոս, Ա—մետաղի ոյսեն հոսանքը միացնում են Պ-ով և Ա-ով նկարի վրա լամպը մինչև միքջ չի պառած: Վարպեսզի հոսանքը լամպի միջով անցնի լամպի կոթի հատակը պետք է շոշափի Ա սլուզակը:

բանը բաժանում է նրա ներքին մասից:

Նույն ձեռով յնտեղում կոթառի մետաղը ագուցարանի կողմանը (վերևի) մասը, այդ ժամանակ կրածանվի ագուցարանի ներքին մասը: Մետաղի ագուցարանները հանելուց հետո դուք կտեսնեք բուն կոթառը, վորք և ուշադրությամբ դիտեցեք, ոգտվելով կոթառի այն նկարագրությունից, վորք վերը տվինք:

Կոթառը հավաքելու համար նախ հարկավոր է բուն կոթառը գնել ագուցարանի ներքեն մասի մեջ: Այնուհետև ուշադրություն դարձրեք, վորք կոթառի հոսանքը հաղորդող մասերն ագուցարանի հետ չեն շփվում:

Հագցրեք ագուցարանի վերևի մասը, վորք պետք է կատարվի առանց դժվարության և առանց ուժ գործադրելու: Ագուցարանի վերևի մասը

* Եթե այդ աշխատանքը տանը կատարելու լինեք, հորմար և սպավել զարժական լամպից նոթքուն կոթառի քանդելն անհրաժեշտ է խրանը հանել խրանցից:

պտտելով ամբացնելուց հետո դուք կարող եք մի անգամ ևս համոզվել, վորք կոթառի հոսանքը հաղորդող մասերն ագուցարանի հետ հաղորդակցություն չունեն:

Հախճաղակե ողակը կոթառի պառաւակածե ակոսին հագցնելով դուք վերացնում եք կոթառի ներքին մասն և մետաղե ագուցարանի միացման հնարքվորությունը:

Մի անգամ ևս քանդեցեք* կոթառը և յերբ անջտաեք նրա ներքին մասը (բուն կոթառը) մտցրեք նրա մեջ լամպը, վորք անցնեք, թե լամպի և կոթառի վմբ մասերն են իրար՝ միանում:

Լամպը հանեցեք և նորից հավաքեցեք կոթառը: 10-րդ նկարում պատկերացված են կոթառի առանձին մասերը:

ԼԱՐԻԱՏՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ № 1.


Խելատանիքի նպատակն եւ պարզե՞լ վո՞ր նյութերն են հոսանքի հաղորդում յեկ վորոնի չեն հաղորդում:

Եթե կրական լուսավորության ցանցի տեխնիկական սարքավորման որի նակից դուք տեսնում եք, վորք հոսանքը հասցվում է լամպերին հաղորդալարերի միջոցով: Վորպեսզի պարզենք հաղորդալարերի և նրանց առանձին մասերի նշանակությունը կուանքն անցկացնելու մեջ, անհրաժեշտ է հետազոտել՝ արդյոք ամբոն նորությ կարող է հոսանք անցկացնել:

ԳՈՐԾԻԲՆԵՐ ՑԵՎ ՆՅՈՒԹԵՐ. գրպանի մարտկոց, կոթառ լամպով և յերկու կառը պղինձ:


1. Հեռացնելով լարերի ծալրերից բամբակե պատոցը, լար ամրացրեք կոթառի սեղմակներին:

2. Լարերի ազատ ծալրերը (մաքրված բամբակե պատոցներից) դիպցրեք մարտկոցի յերկու մետաղի թիթեներին: (Յեթե միացումը կանոնավոր է, լամպը պետք է վառի): Ցեթե լամպը չի վառվում, լարերն իսկուն անջտեցեք մարտկոցը և անմիջապես հալանցեք դասատուին ձեր անհաջողության մասի): աջող փորձն ապացուցում է, վորք պղնձալարով հոսանքն անցնել:



ԱՇԽԱՏ-ՀԵՐԵ
ՄԱՍ

3. Հաղորդալարերն ամուր միացրեք մարտկոցի թիթեղներին (լամպ վառվեց) կտրեցեք մի լարը և սուացված ծալրերը մաքրեցեք բամբակե պատոցից: Լամպը հանգավ, վորովհետև շղթան կտրված է (նկ. 11):



Նկ. 11. Գործիքների միացումը № 1 աշխատանքի համար:

3. Կտրված տեղում զանազան մետաղներ գնելով, փորձեցեք՝ հոսանք հաղորդվեմ են, թե վոչ:

Ցանկալի լեռ փորձարկման

համար վերցնել տարբեր նկութերից միքանի նմուշներ՝ փայտի, տպակու, ունակի, թղթի, հախճապահկու կտորներ, մատուից հանում գրափիտի կտորներ, գրպանի մարտկոցի ածուլի:

Շատ հետաքրքիր ե, կտրված տեղում լարի մաքրած ծալրերն իջեցնել մի բաժակ մաքուր ջրի մեջ և իմանալ՝ մաքուր ջուրը հոսանք հազորդման ե, թե վոչ:

Թթվախառն դարձրեք ալդ ջուրը, կաթեցնելով նրա մեջ միքանի կաթիլ ծծմբաթթու, թթվախառն ջուրը հոսանքը հաղորդման ե:

Միացրեք կտրված տեղը նիկելինի մի կտոր լարով: Հաղորդման ե նա հոսանքը:

Սպիրտալրոցի վրա շիկացրեք ալդ լարը: Ցերբ լարը սառչի, կնկատեք, վոր նա ծածկվել ե ոքսիդի ու շերտով:

Փորձեցեք՝ լարը հիմա հոսանք անցկացնեմ ե:

Հարերի ծալրերը մաքրեցեք ոքսիդից և փորձեցեք՝ լարը հոսանք անցկացնեմ ե, յերբ մտցնում եք շղթայի մեջ ոքսիդից մաքրած մասերով:

Փորձերի արդյունքները գրեցեք աղյուսակի ձևով:

Հաղորդիչներ յեվ անհաղորդիչներ

Անց ե կացնում հոսանքը	Չի անցկացնում հոսանքը
-----------------------	-----------------------

Դիտելով այս աղյուսակը գուք տեսնում եք, վոր միքանի նյութեր անց են կացնում հոսանքը, իսկ մյուսները՝ չեն անցկացնում:

Այն նյարերը, վորոնի հոսանքը չեն անցկացնում, կոչվում են իգուասուներ (մեկուսիչներ):

ՏԵԽՆԻԿԱՆ ՍԱՐՔՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՐԾԱԾՎՈՂ
ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆԵՐ ՅԵՎ ԻՉՈՂՅԱՍՈՐՆԵՐ

Այն հաղորդալարերը, վոր գուք գործածում ելիք փորձի համար, ալտրասատված են պղնձից և փաթաթված բամբակե թելով: Բամբակե թելը հոսանքի վատ հաղորդիչ լինելով, չի անցկացնում իր միջով հոսանքը և թուլ չի տալիս, վոր հոսանքը հաղորդալարից հեռանա:

Դիտեցեք ելեկտրական լուսավորության բոլորալրը (շնուր): Դըրուց ալդ բոլորալրը պաշտպանված ե բամբակի թելի պատոցով, վորի տակ գտնվում ե սետինե իգուացիան: Զգուշությամբ հեռացնելով սետինե իգուացիան, դուք կտեսնեք, վոր նրա տակ ելի բամբակի թելի իգուացիոն կա, սա շրջապատում է պղնձի մի շարք բարակ թելիներ, վորից պատրաստված ե հաղորդալարը: Նույնիսկ ալդ լավ մեկուսացրած լարերը շենքերի պատերով անցկացնելիս ամրացնում են հախճապահկե գլանիկների վրա (նկ. 12), վոր շնչին շենքի պատերին: Ցերե հաղորդալարն անցնում ե այնպիսի տեղով, վորաեղ իգուացիան լինթակա լեռ վասան, այդպիսի տեղերում լարերն անց են կացնում մետաղի հատուկ խողովակներով, վորոնք ներսից պատած են երոնիտով, իսկ ավելի լուրջ դեպքերում հաղորդալարը տեղափորում են չուգունի տուփերի մեջ, ինչպես ալդ տեսանք, յերբ դիտում ելինք հոսանքի մուտքը շենքի մեջ:

Հոսանք՝ հաղորդում են վոչ միայն բոլորալարերով, այլ նաև միաձուլ հաղորդալարով. սա կազմված է վոչ թե բազմաթիվ թելիկներից, այլ մի հաստ լարից, վորը շրջապատված է ձևութով կամ ռետինով տողարած իզոլացիալով: Այս հաղորդալարերը են անց են կացնում գլանիկների վրա և կապում լարով: Այս գլանիկներն առանձնապես անհրաժեշտ են, յերբ զիծն անց է կացվում մերկ լարերով բացույթա: Այս զեղութում միակ իզոլատորը գլանիկն է, վորի համար տեխնիկան



Նկ. 12. Համապակե գլանիկ բոլորալարն անցկացնելու համար. նկարում յերեսմ և քարե պատի մեջ խփված պողպատե խցակը (մեխ), վորին պատուակով ամրացրած ե գլանիկը:




Նկ. 13. Հեռագրական համապակե իզոլատորի կրարվածքը, իզոլատորը պատուակելով ամրացրած և հեռագրական ոյտն յերկաթի կերպին:

առանձին ուշադրություն ե դարձրել թե նրա ձեի մշակման, և թե լավ ամրացնելուն: 13-րդ նկարում յերեսմ ե գլանիկի կտրվածքը: Գլանիկի կենտրոնում կա պտուակալին ակոս, վորով գլանիկն ամրացվում և ոչան լերկաթե կեռի վրա: Գլանիկի վերին մասի ակոսը նրա համար ե, վորպեսզի նրա վրա կապվեն հաղորդալարը, զլանիկի հածի փեշը իրուակ լեղանակին մեկուսացնում ե հաղորդալարը ուան լերկաթե կեռից, վորովին սովորական վոչ մաքուր ջուրը, ինչպես այսանք, իզոլատոր չե, և խոնավ գլանիկն առանց ալդ փեշի, հաղորդալարը կմիացներ կեռի և թաց ոչան հետ:

Փեշի ներքին մասն անձրեի ժամանակ անդամ չոր և մուռմ և հալորդալարը մեկուսացնում է կեռից:

Շատ պտուականառու դեպքերում նույնիսկ գլանիկներ չեն գործածում, այլ կախովի իզոլատորների մի ամբողջ շարան: 14-րդ նկա-

րում պատկերացված են այն հաղորդալարերի կայմերը և իզոլատորները, վորոնք հոսանքը տանում են Շատուրի ելեկտրոկայանից զեպի Մոոկվա:




Նկ. 14. Շատուրի կայանի կայմերը և իզոլատորները, հաղորդալարը պահպանում ե վոչ թե մեկ իզոլատորով, այլ իզոլատորների մի ամբողջ շարանով:

Ա Ն Զ Ա Տ Ի Զ Ն Ե Ր


Զեր լաբորատոր աշխատանքի ժամանակ դուք հոսանքն ընդհատում ելիք, հեռացնելով լարը մարտկոցի թիթեղից, հոսանքի անջատման ալդ լեղանակը, ինարկե, գործնականում անհարմար ե: Ահա թե ինչու հոսանքի ընդհատման և միացման համար զործ են ածում հատուկ գործիքներ — անջատիչներ: Պարզագույն անջատիչը զանգի կոճակն ե (նկար 15): Նա կազմված է մետաղե լերկու թիթեղներից ու և ո, վորոնց միացրած են շղթայի հաղորդալարերը (ա և օ պտուակներով): Թիթեղներից մեկը՝ ու-ը զապանակվում ե, վորի պատճառով միշտ բաժանվում է ու-ից: Հոսանքը միացնելու համար պետք է կոճակը սեղ-

մել և ալղակիսով թիթեղները միացնելու Յերբ սեղմելը դադարիցնում ենք, թիթեղները նորից անջատվում են և հոսանքն ընդհատում:

Ելեկտրական լուսավորության անջատիչն ավելի բարձր կազմություն ունի: Հախճապակե չ թիթեղին ամրացած են լեռկու զապանակով մետաղե թիթեղներ թ, նրանց միջև պատվում ե հախճապակե Յ գլանը, վորի վրա լեռկու հակադիր կողմերից ամրացած են թ մետաղե թիթեղները (նկ. 16): Այս թիթեղն իր մի դիրքով շփվելով լեռկու զբաղանակող թիթեղներին, միացնում ե նրանց և հոսանքները միացնում:



Նկ. 15. Զանգի կոճակի կարգածքը



Նկ. 16. Ելեկտրական լամպի տնջատիչ: Նկարի ձախ կողմում ցույց է տված անջատիչից հանված կափարիչը: Քանդեցեք զգուցում յեղած անջատիչը և համեմատեցեք նկարում պատկերացրածի հետ:


մրուս գիրքով զապանակող թիթեղները բաժանվում են իրարից Յ-ի հախճապակով, վորով հոսանքն ընդհատվում ե:

Հոսանքը միացնելիս յել ընդհատելիս անջատիչը պտտեցիք ժամացուցիչ սլաքի ուղղությամբ:


17—18-րդ նկարում պատկերացված ե անջատիչի լեռորդ տեսակը՝ հատոցը: Այստեղ փայտե կամ մաքմարե տախտակի վրա ամրացրած են լեռկու սեղմակներ, վորոնք կարող են իրար հետ դանակով միանալ: Բարձրացնելով դանակը, մենք անջատում ենք իրարից սեղմակները, վորով և ընդհատում ենք հոսանքը:

Անհրաժեշտ ե ծանոթանալ ուղիղության միացնելիքին, վորի ոգնությամբ անտենան միացվում ե ընդունիչի հետ կ-մ անտենան միացվում ե հողի հետ և ընդունիչն անջատվում ե: Այդ ուղիղության միացնելիքը (նկար 19) բաղկացած է լեռկու հատոցներից, վորոնք ունեն մի ընդհանուր դանակ: Փոխարկիչի դանակը հետ միացած սեղմակին միացնում են զեղի հողը տանող հաղորդալարը: Մյուս լեռկու սեղմակների մեկին միացնում են այն հաղորդալարը, վորը դալիս ե ընդունիչի «հողից»:


իսկ մյուսը միացնում են անտենայից և ընդունիչի «անտենայից» լեռկող լարերը (նկ. 20):




Նկ. 17. Միարեն հատոց: Այս հատոցը կազմված է յեռկու միաբեկն հատոցներից, վորոնք անջատում են զեղի հոսանքի աղբյուրը դանակով յեռկու հատոցները: Հատոցների գանակներն ամրացրած են իզոլյատորից հինգ ընդհանուր կոնտակտում:



Նկ. 18. Յերկրեն հատոց: Այդ հատոցը կազմված է յեռկու միաբեկն հատոցներից, վորոնք անջատում են զեղի հոսանքի աղբյուրը դանակով յեռկու հատոցները: Հատոցների գանակներն ամրացրած են իզոլյատորից հինգ ընդհանուր կոնտակտում:



Նկ. 19. Թագիո-փոխարկիչ (շանթացիքի փոխարկիչ):



Նկ. 20. Փոխարկիչի և ընդունիչի միացնումը: Դանակն ստորին սեղմակի վրա դնելով միացնում են ընդունիչը: Դանակը վերին սեղմակին դնելիս, ընդունիչն անջատվում ե և անտենան միացվում ե հողին:

Փոխարկիչի դանակը մատցնելով այն սեղմակի մեջ, վորը միացած ե անտենայի հետ, վերջինս կմիանա հողին, անտենան «կիոզվի» և ընդունիչը կանչատվի: Դանակը մտնելով յեռկորդ սեղմակի մեջ, դուք ընդունիչը մտցնում եք շղթայի մեջ:

ԻՆՉՊԵՍ ՄԻԱՅՆԵԼ ՀԱՂՈՐԴԱԼԱՐԸ ԳՈՐԾՔՆԵՐԻՆ

Զեր փորձերից տեսաք, վոր հոստնքն անցնում և հաղորդալարի մետաղի մշջով, իսկ բամբակի պատոցը իզոլատոր և Ռեզեմն յերբ պահանջվում և վորեւ գործիք մացնել հոստնքի շղթալի մեջ, առա պետք և այնպես անել, վոր նա միանա հաղորդալարի մաքուր մնանդի հետ, վորի համար անհրաժեշտ և հաղորդալարը մաքրել մեկուսացնող մասից:

Սովորական զանգալարի իզոլացիան կարելի յե մաքրել ապակե թղթով կամ դանակով, կարելի յե նաև ալրելով, վորից հետո լարը դարձլաւ պետք և մաքրել ապակե թղթով:

Բոլորալարի իզոլացիան կարելի յե հեռացնել դանակով, վորից հետո իզոլացիալից մաքրված մասը շփում են ապակե թղթով և բոլոր թելիկները միասին վոլորում ու կազմում մի խիտ բոլորալար այնպես, վոր առանձին թելիկներ դուրս չմնան:

Մաքրված իզոլացիան զզզզվում և, դրա համար լավ կլինի ալր մասը փաթաթել մեկուսացնող ժապավենով, վորը պատրաստված և ուստինով տոգորած բամբակե ժապավենից:

Առանձին խնամքով պետք և կատարել այն գործիքների միացումը, վորոնք մացվում են ելեկտրական լուսավորության ցանցի մեջ: Անփուլթ կատարած միացումները և վատ մեկուսացումը տվյալ դեղքում կարող են անախորժ հետևանքներ տալ:

Կատարեցեք միացումների վերաբերլաւ առաջին աշխատանքը, վորի ընթացքում կսովորեք միացումների տարրական լեղանակները:

ՀԱՂՈՐԴԻՉՆԵՐԻ ՄԻԱՅՆՈՒՄԸ

ԳՈՐԾԵԿԱՆ ԱԾԽԱՏԱԿԵ

Առաջին առաջարրության. միացնել մի բոլորալարի ծայրը մյուսի ծայրի հետ. 1. Մաքրեցեք ձեզ տված իրկու բոլորալարերի ծալբերն իզուսացիալից:

2. Ապակե թղթով մաքրեցեք բոլորալարի միացվող ծալբերը և նրանց իրար հետ վոլորեցեք այնպես, վոր բոլորալարերից մեկը միուսի շարունակությունը կազմի:

3. Միացման տեղը «տինոր» բսեցեք:


4. Ապիրատալոցի վրա զորման տեղը տաքացրեք և յերբ տինոր կհալի, բոլորալարը կրակից հեռացրեք:

5. Միացման տեղը փաթաթեցեք մեկուսացնող ժապավենով, սկսելով փաթաթել բոլորալարի այն մասից, վորտեղ իզոլացիան ոնմնաս և մացել:

Մեկուսացման համար ժապավենը պարուրածև փաթաթում են յերկու զերառվ, մեկը միուսին հակադիր ուղղությամբ:

Ցերկությունը առաջարրություն, սարել խանճը: 21-րդ նկարում ցույց են տված խրանի մասերը:

Ցերե խրանից շտեպսելը դուրս դրտենք և խրանից վերցնենք մե-



Նկ. 21. Խրանի կուղմությունը:

կուսացնով բարակ կափարիչը, ապա կերևան պտուտակածև ակոսված մետաղական բները, վորոնց մեջ պտտելով մացվում են շտեպսելները. կերևան նաև խրանի մարմնի կենուրունում գտնվող բացվածքը, վորի մեջ զբարում ե խրանի հետ միացվող բոլորալարը:

1. Հանեցեք խրանի շտեպսելները, դիտեցեք խրանի կազմությունը:

2. Մաքրեցեք բոլորալարի լարերի ծալբերը, կորեցեք լուրաքանչւութից թելիկների կեսը և պատրաստեցեք այնպիսի ողակ, վորի մեջ մտնի շտեպսելի պտուտակը:

3. Բոլորալարի ամբողջ մաքրված մասը, բացի ողակից, ծածկեցեք մեկուսացնող ժապավենով, միան իզոլացիան հասու չլինի:

4. Առայժմ առաջ կափարիչը դնելու շտեպսելներով ամրացրեք հաղորդալարերը խրանի մեջ և բոլորալարը ձկեցեք, վորպեսզի հաղորդալարը խրանին հարմար ձև ընդունի:

5. Ցերե պտուեցեք շտեպսելները, հազցրեք կափարիչը և նորից մրտցեք շտեպսելները:

Եսատ կարենոր ե, վոր խրանի մեջ հաղորդիչներն իրարից մեկուսացված լինեն, Զմեկուսացված մուռում և միայն շտեպսելներով սեղմված ողակը, Զգուշացեք, վոր իզոլացիայից դուրս առանձին թելեր չմնան:

Յերբարդ առաջադրաւրյուն. սարքել կորարը: 1. Քանդեցեք կոթառը և կափարիչի մեջ լեզած անցքով մոցրեք բոլորալարը (լերկու հաղորդալարերը):

2. Մաքրեցեք բոլորալարերի ծալրերը, կտրեցեք, ինչպես այդ կատարեցիք քիչ առաջ, թելիկների մի մասից ողակ պատրաստեցեք կոթառի* պատրաստեների տակ ամրացնելու համար և հաղորդալարերի այն մասերը, վորոնք դուրս են մնացած իզոլացիայից, ծածկեցեք մեկուսացքով ժապավենով:

3. Ամուր պատելով սեղմակները, հաղորդալարերը միացրեք կոթառին, ստուգեցեք, վոր հաղորդալարերի բոլոր չսեղմված մասերը լավ ծածկված լինեն իզոլացիայով և ապա հավաքեցեք կոթառը:

Յերբարդ առաջադրաւրյուն. հավաքել Շառմական լամպը. Այս աշխատանքի ժամանակ էր կարևոր բոլորալարի ծալրին միացվում և կոթառը, մլուսին՝ խրանը:

Այս աշխատանքի առանձին մասերն արդեն կատարել եք: Գժվար չի լինի աՅբողջ աշխատանքը լրացնել:

Աշխատանքը զերջացնելուց հետո ցուցը ավեք դասատուին. միայն նրա թուլացութեամբ կարող եք ձեր հավաքած լամպը միացնել հոսանքի շղթային:

ԵԼԵԿՏՐՈԿԱՆ ՀՈՍԱՆՔԻ ՏԱՐՅԵՐ ՈՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Նոր մարակոցին միացրած պրպանի լամպը շատ պայծառ և վառվում: Սակալն ժամանակի ընթացքում լամպի լույսը հետզհետև խափարում ե և զերջապես լամպի թելը զադարում և շիկանալուց:

Քանի լամպի թելը շիկանում եր, մենք համոզված ենք, վոր թելով հոսանք և անցնում: Յերբ լամպը դադարեց շիկանալուց, այդպեսի համոզմունք այլևս չունենք, քանի վոր հոսանքի գորության վորեւ նկատելի նշան չկա:


Յերբ առում եք՝ «հոսանք և անցնում» դուք իրապես այդ «հոսանքը» չեք ակնում, այլ նրա մասին դատում եք միայն նրա ազդեցությամբ:

*) Մերօւնի կոթառների մեջ պետք և հաղորդալարերը վոչ թե պատրաստեների տակ ամրացներ, այլ հատուկ անցքերում գնել և սեղմել պատրաստեներով: Այս գեղքում ողակները լինելու փոխարին գուք պետք և վոլորեք թելիկները և ախնորի նրանց պաշտը:

Կաբագ և պատահել, վոր լամպի թելով հոսանք անցնում ե, բայց թուլլ լինելով չի շեկացնում նրան և քանի վոր դուք չեք նկատում հոսանքի վորեն ազդեցություն, հնաբավոր ե, վոր սխալ լեզրակացություն հանեք: Հետևելով փորձերը ձեզ կծանոթացնեն ելեկտրական հոսանքի տարբեր արտահայտություններին. նրանք հիմք կծառալեն կառուցելու ավելի զգայուն գործիքներ, վորոնց միջոցով ավելի հեշտ կինքի ցերեան հանել ելեկտրական հոսանքը, քան ելեկտրական լում պի միջոցով:

Ի վորձ. Վերցրեք լեկլանչեյի լերեք ելեմենտ և իրաբ հետ միացրեանք, ինչպես միացած են զրպանի մարտկոցի ելեմենտները, արսինքն տառաջին ելեմենտի ածուխը միացրեք լերկորդ ելեմենտից ինկին: Առաջին ելեմենտի ցինկին և վերջին ելեմենտի ածուխին միացած հաղորդալարերը համապատասխանում են զրպանի մարտկոցի թեղներին:

Գրպանի լամպի հաղորդալարերը միացրեք ձեր մարտկոցի արտա-



Նկ. 22. Հոսանքը հաղորդալարով անցնելիս
առաջացնում և նրան:

քին ոծուխին ու ցինկին: Լամպի վառվելն ապացուց ե, վոր մարտկոցը սարքին և և հոսանք և առլիս:

Գրպանի լամպը փոխարինենք սովորական լամպով: Նա չի վառվում: Ակնհայտ ե, վոր մարտկոցից լեկող հոսանքը նրան չի շիկանում:

Ի վորձ. Մոտ 20 սմ լերկաթրության (1 մմ տրամագծով) մի կոռը բարակ լերկաթրալար մոցրեք լեկլանչեյի լերեք ելեմենտից կազմված մարտկոցի շղթայի մեջ: Յեթե չեք նկատում այդ լարի առաջանալը, վորով անցնում և հոսանքը, ապա լարն աստիճանաբար կարճացրեք:


Շուտակ կնկատեք, վոր լարը տաքսնում եւ Յեթե ավելի կարճացնեք լարը կարող ե շիկանալ և նույնիսկ այրվել:

III փորձ. 22-րդ նկարում պատկերացված գործիքը բաղկացած է ապակե անոթից և լեռկաթե պարուրից, վորի ծայրերն անցնում են անոթի սետին խցանի միջով: Ծետին խցանի միջով անցնում են նույնի ապակե խողովակ, վորը գործիքը միացնում են մանումնարի հետ: Մարտկոցի հոսանքն անցկացրեք պարուրի միջով: Դուք տեսնում եք, վոր մանումնարի մեջ հեղուկը բարձրանում ե. զրա պատճառը հետեւ վէալն ե. հոսանքը պարուրով անցնելով տաքացնում ե նրան, պարուրը տաքացնում ե անոթի ողը, վորն ընդարձակվելով ճնշում ե մանումնարի հեղուկի վրա և վերջինս բարձրանում են Կատարեցեք նույն փորձը մի երեսնառով:

Հանեք անոթի խցանը և շոշափեցեք պարուրը, այժմ դուք չեք նկատի պարուրի տաքանալը, վորը նկատում ելիք նախորդ գործիքի միջոցով:

Այս յերեք փորձերն ապացուցում են, վոր հոսանքը հաղորդակարով անցնելիս տաքանալը, վորը նկատում ելիք նախորդ գործիքի:

IV փառ. Վերցրեք ածուխի լերկու ձողիկ (կարող եք սպասարձել ձեր քանոդած մարտկոցի ածուխները) և լարերով միացրեք նախորդ մարտկոցի (Լեկլանչովի լերեք ելեկտրատի) ածուխին ու ցինկին: Այդ ձողիկներն իջեցրեք բաժակում գտնվող պղնձի արջասպի լուծույթի մեջ:



Նկ. 23. Պղնձի արջասպի ասրալուծումն ելեկտրական հոսանքով:

Հետեւելով, վոր ձողիկներն իրար չդիպչեն, պահեցեք նրանց լուծույթի մեջ մոտ հինգ բռպի: Ձողիկները հանելով լուծույթից, դուք կնկատեք, վոր մարտկոցի ցինկի հետ միացած ձողիկը ծածկվել ե պղնձի բարակ շերտով, վորն անջատվել ե պղնձի արջասպի լուծույթից: Փորձն ապացուցում ե, վոր՝


պղնձի արջասպի լուծույթը, վորի միջով հոսանքն ե անցնում, տարալուծում ե յեկ ցինկի հետ միացած հաղորդիչի վրա նստում է պղինձը:

Հեղուկի մեջ դբած հաղորդիչները, վորոնք ծառալում են հեղուկի միջով հոսանքն անցկացնելու համար, կանգանենք ելեկտրոդները: Ալումինով պղնձի արջասպի մեջ իջեցրած ածուխն ձողիկներն ելեկտրոդներ են:


V փորձ. Մարտկոցի ածուխը միացրեք այն ելեկտրոդի հետ, վորը ծածկվել եր պղինձով, իսկ մաքուր մասցած ելեկտրոդը միացրեք մաքուցի ցինկի հետ:

Հանելով ելեկտրոդները լուծույթից մի վորոշ ժամանակից հետո, դուք նկատում եք, վոր ցինկի հետ միացրած ելեկտրոդը զարձակ ծածկվել ե պղինձով, իսկ մյուս ելեկտրոդը, վորի վրա պղինձն եր, պղինձը հետզհետեւ տնկետանում եւ:

VI փորձ. 24-րդ նկարում պատկերացված անոթի մեջ ածեք ծծըմթթվի թուլլ լուծույթ և անոթում լիղած ելեկտրոդներին հազցրեք:



Նկ. 24. Ծծըմթթվի լուծույթի տարրալուծումը հոսանքով:



Նկ. 25. Մագնիսական ոլաքի խոռորումը հոսանքի ազդեցությամբ:

յերկու փորձանոթներ, լիքը թթվի լուծույթով: Յերբ ելեկտրական հոսանքն անցնում ե լուծույթով, ելեկտրոդների վրա անջատվում են գազեր, վորոնք հավաքվում են Ա և Բ փորձանոթների մեջ: Ա փորձանոթի մեջ, վորը հազցրած և մաքտոցի ածուխին միացած ելեկտրոդին, ավելի քիչ զազ ե հավաքվում, քան Բ փորձանոթում, վորը հազցրած և ցինկին միացրած ելեկտրոդին: Լցնելով Ա փորձանոթը գազը կարող եք շուռ տալ հիմքով զեպի ցած և մացնել նրա մեջ մի տակաչնող մարմա, վերջինս պալծառ բոցավառվում ե, ուրեմն փորձանոթի գազը թթվածին ե:

Յերկորոշ փորձանոթում (բանեցեք բերանը դեպի ներքի) վառվագ մարմինը հանգչում ե, իսկ զազը վառվում ե: Ուրեմն փորձանոթի զազը լրածին ե:

Յերական փակում

Յերբ ծծըմթթվի լուծույթի միջով հոսանք և անցնում, մաքտոցի ցինկին միացրած ելեկտրոդի վրա առակինում է օքածին, իսկ ածուխին միացրած ելեկտրոդի վրա՝ բրիգածին:

VII փորձ. Մագնիսական սլաքի վրա, նրա լերկարությամբ ձգեցեք մի հաղորդալար և ծայրերը միացրեք մարտկոցին (նկ. 25):

Հասանելի ազդեցությամբ մագնիսական սլաքը խոռոչիւմ և իր նախկին դիրքից:

Անջատելով հոսանքը, դուք էնկատեք, վոր սլաքը նորից վերադառնում է իր նախկին դիրքը: Կատարեցեք նույն փորձը, վերցնելով մարտկոցի փոխարեն մի ելեմենտ:

Դուք ելի կտեսնեք, վոր սլաքը խոռոչիւմ է իր նախկին դիրքից: Յեթե հաղորդալարի այն ծայրը, վորն առաջ միացած եր մարտկոցի ածուխին, ալժմ միացնենք ցինկին, իսկ մարտկոցի ցինկին միացած ծայրը հիմա միացնենք ածուխին, ապա մագնիսական սլաքը կրկին կլուսորվի իր դիրքից, սական հակադիր ուղղությամբ:

Այս փորձը ցույց է տալիս հոսանքի գոյության մի նոր արտահայտություն, բացի այդ ինչպես IV, V և VI փորձերն ապացուցում են, վոր՝

հասանելի միանգամայն փորձ ուղղություն ունի:

Ծննդանիված է հոսանելի ուղղությունը համարել այն ուղղությունը, իորով պղինձը տեղափոխվում էր պղնձի արջասպի վրա կատարած փորձում:

Քանի վոր պղինձը նստում եր այն ելեկտրոդների վրա, վորոնք միացած են ելեմենտի ցինկին, ապա ուրեմն հոսանքն ածուխից գնում է զեպի ցինկը, անցնելով պղինձ արջասպի լուծույթի միջով և ցինկի վրա նստեցնում պղինձը:

Այս ելեկտրոդը, փորով հոսանելի մենում է հեղուկի մեջ, կոչվում է անող, իսկ փորով դուրս է գալիս հեղուկից՝ կարող:

Այսուհետև կրնունենք, վոր լեկանշելի ելեմենտի ցինկն ու ածուխը միացնող ամեն մի հաղորդիչի միջով հոսանքն անցնում և ածուխից դեպի ցինկը: Ածուխը կոչվում է ելեմենտի դրական բևեռ, իսկ ցինկը՝ բացասական: Դրական ու բացասական բևեռները նշանակում են համեյալ նշաններով + և - :

Հարցեր յեվ խնդիրներ


1. Ի՞նչ դեր է կատարում հաղորդալարերի իզոլյացիան:
2. Թվեցեք ձեզ հայտնի իզոլյատորները:
3. Ելեկտրական հոսանքի գոյության բնույթը արտահայտություններ են ձեզ հայտնի:

4. Նկարագրեցեք կոթառի կազմությունը:


5. Ի՞նչ կազմություն ունի ելեկտրական լամպը:

6. Միանգամայն սալքին լամպը, վորը հաղցրած և կոթառի մեջ և մացրած ցանցի մեջ, չի վառվում: Ի՞նչ կարող է լինել դրա պատճառը:

7. Ի՞նչ է կատարվում այն հաղորդիչի հետ, վորով հեռանք է անցնում:



Նկ. 26. Վերաբերում է
8-րդ ինքնուին:



Նկ. 27. Վերաբերում է
9-րդ ինքնուին:

8. 26-րդ նկարում պատկերացված է ողնձի արջասպի լուծույթ պարունակող մի բաժակը. լուծույթի մեջ իջեցրած են Ա և Բ ելեկտրոդները: Սլաքով ցույց է տրված հոսանքի ուղղությունը հեղուկի մեջ: Ցույց տվեք ա) Ա և Բ թիթեղներից վմբն և կաթոդը և վմբն և անողը, բ) վմբ թիթեղի վրա կնոտի պղինձը, գ) թիթեղներից վմբն և միացրած ելեմենտի ածուխին և վմբը՝ ցինկին:

9. 27-րդ նկարում պատկերացված են մի մարտկոցիկ և պղնձի արջասպի լուծույթով մի բաժակ, վորի մեջ իջեցրած են ելեկտրոդները: Միացրեք ելեկտրոդները մարտկոցի հետ այնպես, վոր պղինձը նստի Ա ելեկտրոդի վրա:


10. Զրի տարրալուծման ժամանակ վմբ փորձանոթում կհավաքվի ջրածինը և վորում՝ թթվածինը (նկ. 24):

11. Ի՞նչ կստացվի, յեթե փորձանոթների փոխարեն նախորդ փորձի յերկու ելեկտրոդն ել ձածկենք մի լայն փորձանոթով:


12. Բաժակի մեջ ածած և ծծմբաթթվի լուծույթ և սրա մեջ իջեցրած են Ա և Բ ածուխները: Հոսանքը գնում է սլաքի ուղղությամբ (նկ. 28): Վմբ ածուխի վրա կնոտի ջրածինը և վորի վրա՝ թթվածինը:

13. Թթվածինն աղղելով կապարի վրա, տալիս է կատարոքսիդ: Ի՞նչ յերեսույթներ կարելի յե սպասել, յեթե ածուխների փոխարեն ծծմբաթթվի լուծույթի մեջ իջեցնենք կապարի թիթեղներ և լուծույթով հոսանք անցկացնենք:

14. Նկարեցեք հոսանքի զանազան արտահայտությունները լեռհան բերելու համար ձեր կատարած բոլոր փորձերի ուրվագծերը:



Նկ. 28. Վերաբերում
և 12-րդ խնդիր:



Նկ. 29. Վերաբերում և 15-րդ խնդիր:

15. Մարտկոցի բևեռների մոտ գծած շրջանակների մեջ նշանակեցք (նկ. 29) + և - նշանները: Ալտքներով նշանակած և հոսանքի ուղղությունը:

ՅԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՀՈՍԱՆՔԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱԾՈՒՄԸ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵջ

ԵԼԵԿՏՐՈԼԻՋ

Դուք տեսաք, վոր հոսանքն անցնելով պղնձի արջասպի լուծույթով տարրալուծում և վերջինս, վորի հետևանքով կաթողի վրա նստու և մաքուր պղինձը:

Հեղուկի տարրալուծումը հոսանքով կարելի յե զիտել վնչ մ այն ժամանակի, յերբ հոսանքն անցնում և պղնձի արջասպի լուծույթով, այլև հոսանք հաղորդող ուրիշ հեղուկներով անցնելիս, ինչպես այդ տեսաք ծծմբաթթվի լուծույթի դեպքում:


Յերբ ծծմբաթթվի լուծույթի միջով հոսանք և անցնում, այն ժամանակ կաթողի վրա նստում և ջրածին, անողի վրա թթվածին:

Լուծույթների տարրալուծումը հոսանքի միջոցով՝ կոչվում է ելեկտրոլիզ, իսկ լուծույթը՝ ելեկտրոլիզ: Ելեկտրոլիզի մեջ դրված թիթեղերը, վարոնի ելեկտրոլիզը միացնում են հոսանքին, կոչվում են ելեկտրոլիզեր:

Պղնձի արջասպի լուծույթով անցկացնենք հոսանք, վերցնելով իրենեկտողներ պղնձի յերկու թիթեղներ, վորոնց կշիռը նախապես շատ ճշշտ վորոշված եւ: Մի վորոշ ժամանակից հետո հոսանքն ընդհատենք՝ թիթեղները լվանանք և չորացնենք: Կաթողի (իրեն կաթող ծառալող թիթեղի) վրա պարզ կնկատվի անջատված պղինձը թեթե նորից կը շնենք կաթողը կտեսնենք, վոր նա ծանրացել եւ, վորովհետև նրա վրա նստել և լուծույթից անջատված պղինձը կշռելով անողը կտեսնենք, վոր նա թեթեացել եւ, և մոտավորապես այնքան, վորքան ավելացել ե կաթողը: Այստեղից անհրաժեշտորեն այն լեզրակացության ենք հանգում, վոր պղնձի արջասպի ելեկտրոլիզի ժամանակ, կաթողի վրա նստում և մաքուր պղինձը, իսկ անողը լուծվելով անցնում և լուծույթի մեջ:

Քիմիապես մաքուր պղինձն ելեկտրոտեխնիկայում մեծ դեր ե խաղում: Պղինձն ամենալավ նյութն ե հաղորդալարեր պատրաստելու համար: Յեթե պղնձի հետ, թեկուզ չնշին քանակով, այլ նյութեր կանխառնված, դրանցից զգալի չափով վատանում ե պղնձի հատկությունը, վորպես հոսանքի հաղորդիչի:

Պղնձի մաքրելը բոլոր խառնուրդներից կոչվում ե պղնձի գոռում: Այդ գոռումը կատարվում ե ելեկտրոլիտիկ լեղանակով (նկ. 30):



Նկ. 30. Պղնձի գոռում տաշտի կարգածքը

Փալտի կամ քետոնի հսկայական մեծության տաշտելը լցված են պղնձի արջասպի լուծույթով. այդ տաշտերից լուրաքանչուրի մեջ իջեցրած են իրար միացրած միքանի պղնձե կաթողներ, վորոնք պատրաստված են քիմիապես մաքուր պղնձի թիթեղներից, իսկ նրանց արանքներում դրված են միքանի անողներ. իրար միացած հաստ թիթեղները սովորական վոչ մաքուր պղնձից են:

Հոսանքը, տարրալուծելով պղնձի արջասպի լուծույթը, անջատում ե քիմիապես մաքուր պղինձը. վերջինս նստում ե կաթողների վրա, վորոնք հոսանքի տևողության համեմատ հետզհետե հաստանում են: Անողի թիթեղը հետզհետե քայլքայլում ե անցնում ե լուծույթի մեջ, վորից թիթեղը բարակում ե: Անողի թիթեղի մեջ լեղած խառնուրդները

անլուծելի նստվածք են կազմում, վորը կոչ լում ե անոդային գիրտ (լամ): Յերբ կաթողը հաստանում ե պահանջված չափով, հանում են լուծույթից, նրա փոխարեն կախում պղնձե նոր բարակ թիթեղ: Քարքայված անողի թիթեղը փոխարինում են նորով, վորի հետևանքով գործողությունը կատարվում ե առանց ընդհատման: Ամերիկան մեծ գործարաններն որական մինչև 150 տոնն քիմիապես մաքուր պղինձ են մշակում:

Կարեօր ե նշել, վոր գիրտն իր մեջ պարունակում ե մի շարք շատ արժեքավոր և հազվագյուտ մետաղներ, սրանց թվում նաև վոսկին ու արծաթը:

Հաշվում են, վոր գիրտի քաշը կազմում են անողի թիթեղի քաշի 1 տոկոսը:

Դիրտը կազմված ե պղնձից՝ ($7 - 15\%$), արծաթից՝ ($20 - 30\%$), վոսկուց՝ ($0,1 - 1\%$) և ուրիշ հազվագյուտ մետաղներից, ինչպես են պղատինը և պալաղիումը:

Դիրտից ստացված մետաղների արժեքը ծածկում ե զտման ծախսերը այն աստիճան, վոր չմշակված ու մաքուր պղինձների գինը նույնն ե ստացվում:

Ելեկտրոլիտիկ լեղանակով ստացած պղինձը կոչվում ե ելեկտրոլիտիկ պղինձ:

Ներկայումս Ռւբալում կառուցվում ե Ռւբալի ելեկտրոլիտիկ գործարանը, վորը, ինչպես նախատեսնված ե, տարեկան 110 հազար տոնն ելեկտրոլիտիկ պղինձ պետք ե տա:

ԳԱԼՎԱՆԱԿԵՐՏՈՒԹՅՈՒՆ

Ելեկտրական հոսանքի ոգնությամբ զանազան ուելեֆ նախշներից ու առարկաներից կարելի լի ստանալ նրանց մետաղե ուելեֆ պատճենները: Այդ կատարվում ե հետևյալ ձևով:

Դիցուք տախտակի վրա պատրաստված ե մի նկար՝ գրքի կամ կոտրի համար և պետք ե այդ նկարի պատճենը հանել: Տախտակի վրա նկարը ծածկու են գրաֆիտի բարակ շերտով, վորով տախտակի այդ մասը դառնում ե հոսանքի հաղորդիչ: Պատրաստված տախտակն իջեցնում են պղնձի արջասպի լուծույթի մեջ և հաղորդալարը միացնելով նրան, գարնում են կաթող: Անողի փոխարեն լուծույթի մեջ տեղափորում են պղնձե թիթեղ:

Ելեկտրոլիտիկ ժամանակ անջատված պղինձը նստում է տախտակի վրա: Յերբ պղնձի շերտը բավական հաստանում ե, նրան պոկում են տախտակից իբրև թերթ, պղնձի այդ թերթի վրա ստացվում է տախտակի վրա լեղած նկարի նեղատիվ (հակադիր) պատկերը ճշտությամբ, վոր

կոչվում ե մատրից (մալք): Տախտակի վրա յեղած բոլոր խորությունները պղնձե նեղատիվի վրա ուսուցիկ են ստացվում, և ընդհակառակիր: Յեթե ալղպիսի նեղատիվ պատկերից հարկավոր ե ստանալ որդինավի իսկական պատճենը, ապա պետք ե պատճեն հանել ստացած մատիցից և այն պատճենը, իրեն նեղատիվի պատճենը, միանդամայն համապատասխանում ե որդինավին: Բայց հաճախ այնպիս ե լինում, վոր կարելի յի բավարարվել առանց լերկորդ պատճենի և արտադրության համար ողտվել մատրիցից:

Այս ձեռվ ստացած պատճեններն այն աստիճան հարազատ են, վոր գալվանակերտման ալդ յեղանակն ոգտագործում են այնպիսի մատրիցներ ստանալու համար, վորոնց ոգնությամբ պատրաստում են դրամոփոնի թիթեղներ:

Ի՞նՉՊԵՍ ԵՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԳՐԱՄՈՅՈՒՆԻ ԹԻԹԵՂՆԵՐԸ

Դուք, ինարկե, տեսել եք, վոր գրամոֆոնի թիթեղի մակերեսին կան մի շարք պտուտակաձև գծեր, վորոնք պարուրած գնում են սկսած յեղրից դեպի կենտրոնը: Այդ գծերը կազմված են մի շարք շատ փոքրիկ թմրիկներից ու փոսերից, վորոնք դուք նույնիսկ չեք ել նկատի, յեթե ուշադրությամբ չդիտեք: Գրամոֆոնի թաղանթի աւելին ընկնելով ալդ թմրուկների փոսերի վրա, տարածվում ե, իր տատանումները հաղորդում ե ալդ թաղանթի թիթեղին, վորի հետևանքով մենք ձայն ենք լսում: Գրամոֆոնի թիթեղը, յերգչի կամ նվագախմբի «յերգած» թիթեղի պատճենն ե: Յերգիչը յերգելս կանչնած ե լինում համարյա մի ալղպիսի գրամոֆոնի առաջ, ինչպիսին մենք սովորաբար տեսնում ենք, Բայց դրված թիթեղը բոլորովին հարթ ե լինում և պատրաստված փափուկ մոմից: Գրամոֆոնի մեխանիզմի թիթեղն այնպիս է պտտում և թաղանթի ասեղն ալիքն շարժում, վոր ամեն անդամ թաղանթի ասեղը նոր տեղ ընկնի: Զայների ազգեցության տակ գրամոֆոնի թաղանթը տատանվում ե և ալդ տատանումներն անցնում են ասեղին, վորն իր տատանման հետքերը թողնում ե մոմի վրա:

Յերբ ամբողջ թիթեղն արգեն «յերգված» ե, գալվանակերտման յեղանակով նրանից վերցնում են պղնձե մատրից, վորի վրա թիթեղի թմրիկներին համապատասխանում են փոսեր և ընդհակառակը:

Այդ մատրիցն ամրացնում են պղպատե թիթեղի վրա և նրանով ջրարաշխական մամուլի ոգնությամբ, հատուկ նյութից թիթեղներ են մամլում: Մատրիցի թմրիկները թիթեղի վրա փոսեիներ են գալիս, այսինքն ճշտությամբ վերաբարդում են յերգչի յերգած թիթեղը:

Ա.Խ.Ա.Ց ԿԱՐԻ ՄԵՏԱՂԵ ԻՐԵԲ

Գալվանակերտման ոգնությամբ կարելի յե ստանալ շատ բարդ ձեր մետաղե զանազան առարկաներ, վորոնք կարեր չունեն: Յենթաղբենքը վոր անհրաժեշտ ե քիմիապիս մաքուր պղնձից պատրաստել յեւաբաշիկ՝ առանց կարի և բարակ խողովակներով (նկ. 31): Ալղպիսի յեռացաշիկը հնարավոր չե թափել (ձուլել), քանի վոր խողովակները պետք ե լինեն բարակ և մաքուր պղնձից, իսկ թափվածքով մաքուր պղինձ չի ստացվի: Յեռաբաշիկը պատրաստելու համար, կապարից կամ մոմից շինում են նրա ձեր կաղապար և սրա վրա նստեցնում մի շերտ պղինձ: Յերբ ստացվում ե պահանջված հաստության շերտ, իրը հանում են առաջից և տաքացնելով հալում են յեռաբաշիկի մեջ յեղած մոմը կամ կապարը: Քիմիապիս մաքուր պղնձից կըս- տացվի կար չունեցող յեռաբաշիկ: նկ. 31. Գալվանակերտման յեղանակով ստացված Այդ միենույն ձեռվ կարելի յե պղնձե պղնձե յեռաբաշիկ:

Այդ միենույն ձեռվ կարելի յե պղնձե կոլբա կամ սրվակ ստանալ:

Մոսկվայի պոլիտեխնիկական թանգարանում կա մի նմուշ, վորը հերկալացնում է պղնձե սրվակի մեջ տեղավորված մի ապակե սրվակ

ԳԱԼՎԱՆՉՈՐԾՈՒՄ

Մետաղե իրը հաճախ ծածկում են այլ մետաղի շերտով, վորը պաշտպանում է տվյալ իրն ոքսիդացումից և նրան գեղեցիկ տեսք և տակա: Մետաղի շերտով ծածկելու այդ յեղանակը կոչվում է գալվանագոծում:


Դուք բոլորդ ինարկե տեսել եք ալնպիսի նիկելած իրեր, ինչպիսին են՝ ինքնակեռներ, թեյամաններ, գոների բռնատեղիներ, հեծանիվի մասեր, չմուշկներ և ալին: Այս բոլոր իրերը շինված են վհանիկելից, ալլ արուցրից կամ յերկաթից, միայն յերեսից ծածկված են նիկելի փալուն շերտով:

Կարելի յե ալդ յեղանակով վհան միկելով ծածկել, ալլ արձաթով ու վոսկով:

Այն իրերը, վոր պետք ե նիկելազոնվեն, լավ մաքրվում են ամեն տեսակ կեղտից ու ճարպի հետքերից: Յեթե պահանջվում ե, վոր իրը

Նիկելազոնձելուց հետո փալուն լինի, նրան հղում են մինչև փայլ ստանալը և հետո մաքրում ճարպից:

Նիկելազոնձման լենթակա իրերը կախում են տաշտի մեջ, վորը պարունակում ե հատուկ ձևով պատրաստված նիկելի տղի լուծույթ՝ և հոսանքի աղբուրի բացասական ընեռի հաղորդալարը միացնում են առարկային (նկ. 32). Ավաղանի մեջ անողի փոխարևն կախում են նիկելի թիթեղ կամ լարեր:




Նկ. 32. Նիկելազոնձում:

Հոսանքը վորոշ ժամանակ անցկացնելով առարկալի վրա, ստանում են նիկելի հաստ շերտ: Վոսկեղոնձելու և արծաթազոնձելու ժամանակ տաշտի մեջ ածում են վոսկու և արծաթի աղերի լուծույթներ:

Լավ շերտ ստանալու համար պահանջվում ե լուծույթը կանոնավոր ձևով պատրաստել, իրը լավ մաքրել և այնպիսի հոսանք տալ, վորը համապատասխանի տվյալ առարկալին: Բարակ շերտն ստացվում է միքանի մապատասխանի տվյալ առարկալին:

ըովելում, իսկ հաստ շերտի համար ավելի լերկար ժամանակ [ե պահանջվում (նկ. 33):



Նկ. 33. Գալվանակերտման ցեխի անլյան լուսանկարը:

Առաջամասում գուք տեսնում եք գալվանակերտման աշխատք: Կողքերի վրա կերպութիւնը հն մետաղի ձողեր, վորոնցից կախված են անողի թիթեղները Միջն ձողից կախում են դալվանազոնձման լենթակա իրեւ հետին պատի վրա յերկում ե բացիկ տախտակն այն գործիքներով, վորոնց ոգնությամբ կանոնավորում են ելեկտրական հոսանքը: Ուշագրությամբ նայեցեք այդ տախտակին պատասխանեցեք՝ հիմա հոսանք անցնեմ եւ:

ԱԼՅՈՒՄԻՆԻՈՒՄԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՌՈՒՄԸ

Ալյումինիումը գտնված ե սրանից միայն հարլուր տարի առաջ. նա մի մետաղ ե, վոր թեթև ե՝ ինչպես ապակին, փոփոխության չենթարկվող՝ ինչպես արծաթը, ունի ամենաբաղմազան գործադրություններ:

Չնալած, վոր ալյումինիումն ստացվում է կավից և լերկրի կեղեց

կազմող նյութերի մեջ ամենից շատ տարածվածներից մեկն ե, սակայն նա ամենից ուշ և գործնական կիրառություն ստացել: 1881 թվից ալյումինիումն ստացվեց լաբորատոր լեղանակով և նա վստահուն հավասար արժեք ուներ: 1886 թվին ալյումինիումի արժեքն ընկալ մոտ մի կիլոգրամին մինչև 50 ռուբլի: Ներկայումս ալյումինիումն ամենատարածված մետաղն ե, վորից պատրաստում են շատ բազմազան

առարկաներ, սկսած ամանեղենից և ելեկտրոտեխնիկային անհրաժեշտ հաղորդալարերից:


Արդյունաբերության համար մեծ նշանակություն ունեն ալյումինիումի համաձուլվածքներն այլ մետաղների հետ: Առանձնապես կարեռ են յերկու համաձուլվածքներ՝ դուք — ալյումինիումը, վորի կազմության մեջ մանում և մոտավորապես 5% պղինձ, $0,5\%$ մագնեզիում և $0,5\%$ մանգան, մուացած 94% ՝ կազմում և ալյումինիումը և կոլյուգ-ալյումինիումը, վոր պատրաստվում ե ԽՍՀՄ-ի Կոլյուգինի պետքործարանում:

Այս համաձուլվածքները պահպանելով ալյումինիումի տեսակաբար կշիռը ($2,6$) ունեն լավորակ պողպատի հատկություններ, վորի հետեւանքով հանդիսանում են ուղանավի և դիրիժարլի մասեր պատրաստելու, ամենաբարձր նյութերը:

Ալյումինիումը տարածված մետաղ դարձավ միայն այն ժամանակ, յերբ նրա ստացման համար հնարավոր լեղավ գործածել եժան ելեկտրական եներգիա:

Ալյումինիումն ստացվում է հալված ալյումինանքից ելեկտրոլիզի միջոցով (նկ. 34): Կավանողի (ալյումինիումոքսիդի) լուծման համար ելեկտրոլիտ վերցնում են հալված կոփոլիթը (ալյումինիում ֆլուորիդը): Հոսանքն անցկացնելով կոփոլիթի միջով՝ նրան հալեցնում են հենց հոսանքի տված ջերմությունով: Այս հալված կոփոլիթի մեջ լուծում են կավանողը: Հոսանքն անցնում է հալված զանգվածով և կաթոդի վրա նստում և մաքուր ալյումինիումը, իբրև կաթոդ՝ ծառալում են այն անոթի ածուխն հիմքը և պատերը, վոր վերցրած ե հալելու համար:

Հալված մաքուր ալյումինիումը, վորն ավելի ծանր ե, քան նրա




Նկ. 34. Ալյումինիում ստանալու:

հանքը, իջնում և հատակը, վորտեղից հատուկ անցքով հոսում է կաղապարների մեջ:

Ալյումինիումի արտադրությունը հնարավոր է, յերբ կա եժան ելեկտրական եներգիա և լավ ալյումինանքը: Այդպիսի պայմաններ կան վոլտովի հիդրոկելլարական կայանի շրջանում, վորտեղ գոնված են ալյումինանքի բովեր (Տիխվինյան բոկսիտներ):

Հնգամյա պլանում նախատեսված է Դնեպրի վրա շինել ալյումինիումի գործարան, վորը պետք է տա 15000 տոնն ալյումինիում և Սվիբ գետի վրա մի գործարան՝ 5000 տոննի համար:



Նկ. 35. Ակկումուլատորի լցնելը:

Բացի լեկլանշեյի և այլ սխատեմի ելեմենտներից, շատ հաճախ գործնականում գործածում են ալյումինիումով ակկումուլատորներ (կուտակիչներ):

Ամենապարզ ակկումուլատորը կազմված է ծծմբաթթվի մեջ զրված յերկու կապարե թիթեղներից: Պատրաստելով այդպիսի ակկումուլատոր և ստուգելով նրա գործողությունը թեկուզ ելեկտրական զանգի վրա, դուք կարող եք համոզվել, վոր նա գեռ հոսանք չի տալիս, զանգը չի գործում. Վորպեսզի այս ակկումուլատորը գործի, նրան պետք ե «լիցք տալ», «լցնել»: Ակկումուլատորը լցնելու համար ելեմենտների մարտկոցից նրա միջով հոսանք են անցկացնում, միացնելով ակկումուլատորի կապարե ելեկտրոդները մարտկոցի սեղմակներին, մի վորոշ ժամանակից հետո ակկումուլատորը լիցք կստանա և հոսանք կտա: Քանի վոր, ներկայումս ակկումուլատորները մեծ գործնական նշանակություն ունեն, ալելի մանրամասն ծանոթանանք նրանց:

ԼԱԲՈՐԱՏՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ № 2.

Աշխատանքի նպատակը. ծանոքանալ ակկումուլատորի կազմության, ներկայումս յեկ պարպիման հետ:

ՔՐԹՆԻՐՆԵՐ ՅԵԿ ՆՅՈՒԹԵՐ. Լեկլանշեյի յերեք թաց ելեմենտներ, յերկու կապարե թիթեղներ իրենց սեղմակներով, մի բաժակ՝ ծ մ բ ա թ թ գ ի լուծությունից:

Կապարե թիթեղների համար փոքրիկ ափսե, հաղորդալարեր, գրավանի ելեկտրական լամպ կամ զանդ, մագնիսական ոլաք չտառախիլի վրա, ալաղ, որբիչ անուշտորի սպիրտ, մի կտոր ֆաներ:

Ուժագրությունն. Թրվի նետ զգույշ վարդիլ, բրուն չկարեցնել սեղանի յել հազուսի վրա Թրվից հանած կապարե թիթեղները դնել ափսելի մեջ: Յերե բրուն կարեցնել հազուսի կամ սեղանի վրա, բիծն անմիջապես նախ անուշադրի սպիրտով լիացեք, ապա ջրով: Աշխատանից նետ ձեռները լվանալ:

1. Ելեկտրական ելեմենտներից կազմեցիք մարտկոց: Առաջին ելեմենտի ածուխը և վերջինի ցինկը մնում են աղատ, ածուխը մարտկոցի գրական ընեռն է (+) իսկ ցինկը՝ բացասական (-):

2. Մաքրեցիք կապարե թիթեղները թաց սրբիչով և ավաղով մինչև վոր փալիքն: (Մաքրելու համար սեղանի վրա դրեք ֆաների կտորը և նրա վրա կապարե թիթեղները: Թիթեղները ջրով լվանալուց հետո, դրեք ծծմբաթթվով բաժակի մեջ և հետևեցեք, վոր ամբողջ փորձի ընթացքում իրար չըխչեն:

3. Սեղմակներով հաղորդալարերն ամրացրեք արդ թիթեղներին և սուուղեցեք լամպի, զանգի կամ մագնիսական ոլաքի ողնությամբ՝ հոսանք կմ, թե վոչ:

4. Լարերը զանգից կամ լամպից անջատելով, ձեր արդ անլիցք «ակկումուլյատորը» մտցրեք մարտկոցի շղթալի մեջ:

5. Ածուխին միացած թիթեղը նշանակեցեք + նշանով, իսկ ցինկին միացած թիթեղը՝ — նշանով (նկ. 35):

Ի՞նչ ե կատարվում ակկումուլյատորի ներսում: Քանի վոր ավազ մոմենտում հոսանքն անցնում է ծծմբաթթվի լուծույթով, առաջ հիշելով այն փորձը, վոր դուք կատարեցիք հոսանքը ծծմբաթթվի միջով անցկացնելիս, դուք կարող եք պատասխանել, թե ինչ գաղ ե նստում այն թիթեղի վրա, վորը նշանակված է + նշանով:

Ի՞նչ գաղ ե նստում այն թիթեղի վրա, վորը — նշանով և նշանակված:

6. Վորոշ ժամանակից հետո հաղորդալարերը մարտկոցից անջատեցեք և — ով նշանակված թիթեղը լուծույթից հանեցեք:

Թիթեղի վրա վորին փոփոխություն նկատվելու մ:

7. Այդ թիթեղը նորից դրեք բաժակի մեջ և հանեցեք + նշանով թիթեղը:

Ի՞նչ փոփոխություն ե կը ել թիթեղը:

Ի՞նչ բարակ շերտ ե ստացվել թիթեղի վրա:

Թիթեղի վրանի գորշ նատկածքը կապար դիոքսիդ և, PbO_2 :


Վարտեղից ստացվեց ալն:

8. Թիթեղը դրեք լուծույթի մեջ և զանգի կամ լամպի վրա ստու-

դեցեք՝ ձեր «ակկումուլյատորը» հոսանք տալիս ե, թե վոչ:

9. Անջատեցեք լամպը կամ

զանգը, միացրեք ակկումուլյա-
տորի դրական և բացասական
հաղորդալարերն իրար հետ և մի
յերկու բոլիցից հետո ստուգե-
ցեք՝ ակկումուլյատորը գոր-
ծում ե:



10. Թիթեղները լուծույթից

հանելով, ուշաղը լույս դարձ- նկ. 36. Ակկումուլյատորի պարագաներ նրանց արտաքին տեսքին:

Բացասական թիթեղը մաքուր և մնացել, ինչպես առաջ:

Դրական թիթեղի վրա գորչ նստվածքն առաջվա նման ուժեղ է:

11. Ակկումուլյատորը մի անգամ ևս լցրեք. նաև ցեղեք՝ ինչ տեսք ընդունեցին թիթեղները և, ոգտվելով մագնիսական ոլաքից, վրոշե-
ցեք հոսանքի ուղղությունն ակկումուլյատորի շղթայի մեջ: Այդ նպա-
տակով առաջարկում ենք ակկումուլյատորի հաղորդիչը տեղափոխել
մագնիսական ոլաքի վրա ուղղությամբ: Փակելով հոսանքը, վո-
րոշել, թե վիր կողմն և խոտորվում ոլաքի հյուսիսային բևեռը: Այդ
փորձից հետո հոսանքն անջատեցեք. դեպի + նշանով թիթեղը դնա-
ցող հաղորդալարի վրա հանգույց կապեցեք:

Ակկումուլյատորի փոխարեն վեցցներկի մարտկոց՝ աշխատեցեք, վոր
մագնիսական ոլաքի վերեւ գտնվող հաղորդալարի միջով հոսանքը
անցկացնելիս, ոլաքի հյուսիսային ծալը խոտորվի նախկին ուղղու-
թյամբ:

Իմասնալով մարտկոցի հոսանքի ուղղությունը և համեմատելով ակ-
կումուլյատորը փակող հաղորդալարով անցնող հոսանքի ուղղության
կումուլյատորը կարող հաղորդալարով անցնող հոսանքի ուղղությանը:
Կումուլյատորի ակկումուլյատորի վիր թիթեղն և դրա-
կան բևեռը և վորը բացասականը:

ԱԿԿՈՒՄՈՒԼՅԱՏՈՐԻ ԿԱՏԱԼՈԳ. ՊՐՈՑԵՍՆԵՐ

Լարորատոր աշխատանքով դուք տեսաք, վոր ձեր ակկումուլյատո-
րը, վորը կազմված եք ծծմբաթթվի լուծույթի մեջ, զրած կապարի
յերկու թիթեղներից ինքն իրեն հոսանք չի տալիս: Հարկավոր ե այդ
ակկումուլյատորը «լցնել»: Այդ լցման ժամանակ հոսանքը մոռնում է
ծծմբաթթվի մեջ մարտկոցի դրական բևեռին միացած թիթեղով:
Վուրս ե գալիս բացասականին միացած թիթեղով:


Հոսանքը ծծմբաթթվի լուծույթով անցնելիս, վերջինս տարրալում և անողի վրա նստում և թթվածինը, վորը կապարի հետ միանալով, տալիս ե մուգ գորշագույն կապարդիոքսիդ, իսկ կաթողի վրա նստում և չրածինը, վորը կապարոքսիդին միանալով վերականգնում և մաքուր կապար:

Այդ ձևով լցված ակումբուլյատորն արդեն միատեսակ թիթեղներից չի կազմած:


Նկ. 37. Հոսանքի ուղղությունը լցնելու ժամանակ:

Ակումբուլյատորը պարպելու ժամանակ հոսանքի ուղղությունը ծծմբաթթվի մեջ փոխվում է (Նկ. 38), և դրա հետ միասին փոխվում են անջատվող գազերի տեղերը:

Պարպման ժամանակ ջրածինն անջատվում է կապարդիոքսիդով ծածկը թիթեղի մոտ և միանալով թթվածին, տալիս ե կապարոքսիդ: Պարպման ժամանակ մաքուր կապարի վրա անջատված թթվածինն ոքսիդացնում է նրան, տալով կապարոքսիդ:




Նկ. 38. Հոսանքի ուղղությունը պարպման ժամանակ:



Նկ. 39. Տեխնիկական կապարի ակումբուլյատոր:

Յյոպիսով թիթեղները նորից միատեսակ են դառնում և ակումբուլյատոր հոսանք չի տալիս: Պետք է նորից լցնել:

Այդ յերկորդ լիցքի ժամանակ ջրածինն անջատվելով ոքսիդով ծածկված կաթողական թիթեղի վրա, ոքսիդից թթվածինը լուլում է,



վ թոնովրությունով մաքրվում է, ոքսիդով ծածկված անողական թիթեղի վրա, անջատված թթվածինը կապարոքսիդը դարձնում է կապարդիոքսիդ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՈՒԼՅԱՏՈՐՆԵՐ

Զեր աշխատանքների ժամանակ դիոքսիդի շերտը շատ բարակ երստացվում: Դրա համար ել ակումբուլյատորը յերկար չեր աշխատում: Վորպեսզի նա պիտանի լինի յերկար աշխատանքի համար, հարկավոր և թիթեղների վրա կապարդիոքսիդի բավական մեծ պաշար կուտակել:

Ոկումուլյատորներ պատրաստող գործարաններն այդ նպատակին հասնում են ակումբուլյատորների թիթեղները պատրաստելով կարարի բարդ վանդակներից, այդ վանդակները լցնում են հատուկ նյութով, վորի մեջ կա կապարոքսիդ (Նկ. 39):

Առաջին լիցքի ժամանակ բացասական բևեռի վրա այդ ոքսիդները փոխվում են մաքուր սպոնդանման կապարի, իսկ դրական թիթեղի վրա՝ կապարդիոքսիդի:

Բանի վոր այս դեղքում կապարդիոքսիդի զգալի պաշար և ստացվում, ակումբուլյատորը կարող է տեսական հոսանք տալ: Կապարդիոքսիդի պաշարն ավելացնելու համար, ակումբուլյատորում դնում են վճռ թե մեկական դրական ու բացասական թիթեղները, այլ միքանիսը:

Ակումբուլյատորով աշխատելիս պետք է հետևել մի շաբթ կանոնների, վորոնք տապարված են այդ ակումբուլյատորների արկղների վրա: Այդ կանոններին չհետեւելու դեպքում վտանգ կա, վոր ակումբուլյատորը կարող է վերջնականապես փչանալ, ակումբուլյատորի յերկու բևեռներն անմիջապես պղնձե լարով միացնելուց: այդ «կարճ» միացումը միանգամայն փչացնում է ակումբուլյատորը:

ԱԿՈՒՄԲՈՒԼՅԱՏՈՐԻ ԳՐԱԾԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԵԽՆԻԿԱՅՈՒՄ

Շանոթանալով ակումբուլյատորի մեջ կատարվող յերկույթներին, դուք առաջին հայացքից իրավունք ունեք հիամթափիվելու ակումբուլյատորից: Այդ ինչ հերգիւայի աղբյուր ե, վորն ինքը կարիք ունի լիցք ստանալու: Ամելի լավ չե ոգտիլ ուղղակի ելեմենտներից: Յեզ ինչու ակումբուլյատորը գործադրություն ունի տեխնիկայում:

Բանը նրանում ե, վոր «ակումբուլյատոր» բառը նշանակում է «կուտակող» accumulate — կուտակել բառից): Նրա գերն այն ե, վոր ունեցած ելեկտրական եներգիայի ազատ պաշարը հավաքի և ժամանակին տա այնտեղ, վորտեղ նրա կարիքը կա:

Ցենթրալիզացիա, վոր ելեկտրակայնում զիշեր ու ցերեկ մեքենաներն աշխատում են սպառողներին եներգիա ուղարկելու համար, բայց ցերեկը և խոր դիշերն սպառողին քիչ եներգիա յե պետք: Թում ե

Եներգիայի ազատ պաշար, վորը կարելի յե կուտակել ակկումուլյա-
տորների մեջ: Յերեկոյան, յերբ բոլորն իրենց լուսերը վառում են,
կայանի եներգիան կարող ե չբավարարել: Ահա այստեղ ե, վոր կարե-
լի յե ոգտագործել ակկումուլյատորների որվա ընթացքում հավաքած
պաշարը:

Զեր ասդիոսիրող ընկերները շատ լավ գիտեն, թե վորքան քմահած
են ելեմնտները և վորքան թանգ և նատում նրանց տված հոսանքը,
թեպետև իրենք թանգ չեն:

Ակկումուլյատորի վաճառքի գինը բարձր ե, բայց միշտ կանոնա-
վոր և աշխատում (կանոնավոր խնամքի գեղքում) և նրան լիցք տա-
լու վրա արված ծախսն անհամեմատ փոքր ե, քան անպետքացած ելե-
մնտները նորերով փոխարինելը:

Ակկումուլյատորի ոգնությամբ ելեկտրական եներգիան կարելի յե
տանել ցանկացած վայրը: Նրանցով լուսավորվում են գնացքի վա-
գոնները, նրա կանգնած ժամանակ, յերբ գնացքի գինամոմեքենանե-
րը դադարում են աշխատելուց: Ակկումուլյատորների մարտկոցը սու-
զանավերի շարժիչներին հոսանք և տալիս, վորով շարժման մեջ են
գրվում սուզանավերը ջրի տակ լողալու ժամանակ: Կան ավտոմոբիլ-
ներ, փորոնք շարժման մեջ են դրվում վհչ թե բենզինով, այլ ակ-
կումուլյատորներով: Վերջապես ակկումուլյատորներ են հարկավոր,
վորպեսզի ավտոմոբիլը կանգնած ժամանակ ել լույս ունենա և դադա-
րից ավտոմատիկ կերպով շարժման մեջ դրվի: Դուք հավանորեն տե-
սած կլինեք, թե ինչպես են ավտոմոբիլները լարում, «բանցելու
բռնակով»: Այս գործողությունը շատ անդուր և յերեմն ել նույնիսկ
վտանգավոր, քանի վոր բռնակը միշտ կարող ե հակահարված տալ,
վորից ձեռքը կարող ե գուրս ընկնել և նույնիսկ կոտրվել: Ներկայիս
կատարելագործված ավտոմոբիլներում այդպիսի բռնակ չկա: Ակկու-
մուլյատորների հոսանքը շարժման մեջ և դնում փոքրիկ մատորը՝
«սուարտեր» և վերջինս իր հերթին շարժման մեջ և դնում շարժիչի
թափանիվը:

«Անվտանգ լամպերը», վորոնցից հանքափորերն ոգտվում են գա-
զալին հանքանորերում, միայն այն գեղքում են իսկապես անվտանգ,
յերբ նրանք միանգամայն սարքի յեն: Բավական ե, վոր լամպի ազա-
կին լավ կիս չլինի ցանցին, և անվտանգ լամպը զանում և վտան-
գավոր, ինչպես բաց կրակը: Ներկայումս հանքահորերում սկսում են
գործազրել ելեկտրական շարժական լամպեր, վորոնք իրենց եներ-
գիան ստանում են փոքր ակկումուլյատորներից: Այդ լամպերը միան-
գամայն անվտանգ են և անհամեմատ շատ լույս են տալիս, քան հան-
գափորների սովորական լամպերը: Ելեկտրական լամպն այնպես կա-
րելի յե ամբացնել, վոր ձեռքերն ազատ լինեն, այս նույնպես մեծ

հարմարություն ե: 40-րդ նկարում պատկերացված ե հանքափորի
պլաստիկին ամրացրած լամպը: Հոսանքը հաղորդելով անցնում է զեպի
լամպը դուռը ամրացրած ակկումուլյատորից: Կան և ուրիշ լամպեր՝
լամպը դուռը ամրացրած ակկումուլյատորից:



Նկ. 40. Հանքափորի գլխարկին ամրաց-
րած ելեկտրական լամպը:



Նկ. 41. Ելեկտրական շարժական լամպ
ակկումուլյատորի:

անմիջականորեն միացրած ակկումուլյատորին, վորոնց հանքափորը
կարող ե դնել կամ կախել այնպես, վոր աշխատանքի ժամանակ լամ-
պի համար չանհանգատանա (Նկ. 41):

ԵԳԻՍՈՒՆԻ ԱԿԱՐԻՄՈՒԼՅՈՏՈՐԸ



Նկ. 42. Եղիսոնի ակկու-
մուլյատորը

Կապարե ակկումուլյատորները շատ ծանր են և ցնցումից հետությամբ քանդվում են, վորի համար ցանկալի չե նրանց գոր-
ծածել ավտոմոբիլների մեջ: Ավտոմոբիլնե-
րի վրա մեծ մասամբ գործածում են եղիսոնի ակկումուլյատորները (Նկ. 42), վո-
րոնց դրական թիթեղը կազմված ե նիկել-
պերոքսիդից, իսկ բացասականը՝ մաքուր
յերկաթից: Այդ թիթեղներն իջեցրած են
ուտիչ կալիի լուծուկթի մեջ: Եղիսոնի ակ-
կումուլյատորները շատ թեթև են, ցնցում-
ներից չեն փշանում և ունեն մի շարք ալ-
առավելություններ, վորոնց հետևանքով
նրանց գերադասում են կապարալին ակ-
կումուլյատորներից:

Նախորդ աշխատանքում դուք տեսաք, վոր ակլումուլատորն աշխատանքի համար պետք է լիցը ունենա: Այդ լիցը համար վորոշամակութամբ ելեկտրական եներգիա է ծախսվում, վորն ակլումուլատորն ստանում է կամ ելեմենտներից, ինչպես տեսաք ձեր աշխատանքի ընթացքում, և կամ դինամո-մեքենաներից:

Ելեկտրական եներգիան մտնելով ակլումուլատորի մեջ, քիմիական գործողություններ ե կատարում, վորոնք են ջրի տարրալուծումը և, որա հետ կապված, կապարդիոքսիդի և մաքուր կապարի առաջացումը: Լցված ակլումուլատորի աշխատանքի ժամանակ նախ և առաջ տեսնում ենք, վոր կապարդիոքսիդ և ծախսվում և մաքուր կապարն ոքսիդանում է: Կապարդիոքսիդի այդ ծախսումը կատարվում է շարունակ, քանի գեռ ակլումուլատորը հոսանք ե տալիս:

Ակլումուլատորում լեզած քիմիական եներգիան ծախսվում է և նրա փոխարեն ելեկտրական եներգիա յե ստացվում:

Ելեմենտները լիցը չեն պահանջում, բայց մենք տեսնում ենք, վոր նրանք ելեկտրական եներգիա լին տալիս: Փորձենք պարզել, թե ինչ եներգիայի հաշվին են նրանք հոսանք տալիս:

Լեզանշեյի մարտկոցիները քանդելիս դուք տեսաք, վոր ելեմենտի ցինկերը շատ մած ելին:

Նորոգեցեք ցինկը, լցրեք ելեմենտն անուշաղի թարմ լուծույթ, և առաջգա փչացած ելեմենտը կսկսի նորից աշխատել վորոշ ժամանակ. (Ճիշտ ե, ավելի վատ, քան նոր ժամանակ, քանի վոր նրա մեջ չեք փոխել մանգան դիոքսիդը): Այդ գեղքում ևս մենք տեսնում ենք նյութերի ծախսում և նրանց հետ միասին, այն քիմիական եներգիայի ծախսումը, վոր կար այդ նյութերի մեջ: Սակայն միայն քիմիական եներգիայի ծախսումը դեռ քիչ ե ելեկտրական հոսանք առաջացնելու համար: Այրմար ժամանակ քիմիական եներգիան, ինչպես գիտեք, փոխարկվում և չերմականի: Պետք ե ինչ-վոր պայմաններ ստեղծել վորոնց տեղի ունենալու գեղքում ընդհանրապես հոսարավոր և ծախսավածք քիմիական եներգիայի փոխարեն ելեկտրական հոսանք ստանալ:

Կատարեցեք հատեյալ փորձը.

Ծծմբաթթվի լուծույթի մեջ իջեցրեք ցինկի մի թիթեղ: Դուք տեսնում եք, վոր քիմիական ուեակցիա լի առաջանում: Թթվի մեջ իջեցրեք յերկու ցինկի թիթեղներ և փորձեցրեք, ինչպես կատարեցիք ակլումուլատորի հետ, ձեր սարքած գործիքը հոսանք տալի՞ս ե:

Վոչ լամպը և վոչ ել մագնիսական սլաքը հոսանք չեն ցույց տա: Վոչ լամպը և վոչ ել մագնիսական սլաքը հոսանք չեն ցույց տա: Ցինկի թիթեղները համելով, փոխարենը ծծմբաթթվի լուծույթի

մեջ իջեցրեք յերկու պղնձե թիթեղներ: Պատրաստած գործիքը փորձելով կտեսնեք, վոր ելի չի ստացվում:

Լուծույթի մեջ մի ցինկի և մի պղնձե թիթեղներ տեղավորելով դուք կտեսնեք, վոր ծծմբաթթվի ազդեցությունը նրանց վրա տարբեր ե, և յերկրորդ՝ կտեսնեք, վոր այդպիսի ելեմենտը հոսանք և տալիս:

Ակլումուլատորի հետ կատարած այս փորձից ու աշխատանքից ահճախաժեշտ ե յեղակացնել:

Նվեճենք պետք ե կազմիած լինի սարանը բիբելներից:

Հսանիի առաջացման անհետեց պարման ե՝ հեղուկի սարբեր, իմական ազդեցուրյունը սարանը բիբելների վրա:


Նվեճենքների մեջ եներգիայի ալլյուր և համբխանում ենեմեն կազմով նյութերի վրա:

Պատրաստեցեք յերկու մեծ «Վոլտայի ելեմենտներ», նրանցից լուծույթանչուրի համար վերցնելով յերկու բարակ և նեղ շերտեր, մեկը պղնձից, ամարգամած ցինկից (նկ. 43): Այդ մետաղյա թիթեղներն ամրացնելով խցանեների մեջ, թողեր, վոր նրանք աղատ լողան ծծմբաթթվի 100% առաջ լուծույթում, Քանի գեռ այդ թիթեղներին ծայրերը փակված (միացրած) չեն, ելեմենտի մեջ վազ մի փոփոխություն դուք չեք նկատի: Ելեմենտներից մեկը փակցեք, ելեկտրոդների վերի ծայրերն ամուր սղողմելով իրար:

Փակ ելեմենտի մեջ հոսանք և սկսվում պղնձից գեղիքի ցինկը մետաղների միացված ծայրերի միջով, և ցինկից գեղիքի պղնձը՝ հեղուկի ներսում: Պղնձնել թիթեղների վրա ջրածին և անջատում, իսկ ցինկի թիթեղը զանյալ կերպով լուծվում և ծծմբաթթվի մեջ: Միքանի ըսպեցից հետո փակ ելեմենտի ցինկն ամրացնվին լուծվում ե, մինչդեռ բաց ելեմենտի ցինկը մնում և անվետ:

Զբանի անջատվելը կաթողի վրա կոչվում է «Բիեռուացում (պոլիմերիզացիա): Այդ բիեռուացումը շատ ե խանգարում ելեմենտի աշխատանքին, այս պատճառով ամեն կերպ աշխատում են վոչնչացնել կամ զեթ թուլացնել նրան: Այս նյութերը, վորոնք խանգարում են ջրածնի անջատմանը, կոչվում են անբեռացուցիչներ (գեղողիսարիզատորներ):

Լեզանշեյի ելեմենտի մեջ այդպիսի անբեռացուցիչ և հանդիսանում մանգանզիոքսիդը:



Նկ. 43.

Շատ հաճախ դպրոցական լաբորատորիաներում գործ են ածում Գրեսեյի ելեմենտը, վորի մեջ ելեկտրոդի դեր են կատարում ցինկի և ածուխի թիթեղները, վորոնք տեղափորված են 1000 սմ³ ջրից, 100 գր. կալիում դիքրոմատից և 100 սմ³ ծծմբաթթվից կազմված լուծույթում:

Այս ելեմենտի մեջ անրենուացուցիչ դերը կատարում է կալիում դիքրոմատը: Յերբ ելեմենտն այլևս չի ողտագործվում, թիթեղները պետք է դուրս հանել լուծույթից, վորովհետև նույնիսկ ամալգամած ցինկը մաշվում է լուծույթի մեջ:

Գրեսեյի ելեմենտի մեջ խմորալին հեղուկը շատ ուժիչ հեղուկ է, այդ պատճառով Գրեսեյի ելեմենտով աշխատելիս չափազանց մեծ զգություն և պահանջվում: Այդ հեղուկը չպետք է կաթեցնել վոչ հագուստի և վոչ սեղանների վրա: Յեթե պատահի, վոր հեղուկը թափվի, նրա վրա պետք է անմիջապես սողա ցանել կամ անուշաղը սպիրտ ածել:

Հեղուկը պատրաստելիս, նախ պետք է կալիում դիքրոմատը լուծել ջրում, ապա շատ փոքրիկ քանակներով թթուն ածել լուծույթի մեջ և վճռ ընդհակառակը: Թթուն ածելիս լուծույթը տաքանում է, վորի հետևանքով պետք է նախազգուշական միջոցներ ձեռք առնել վոր-պեսզի անոթը չճաքի: Հարմար է լուծույթը պատրաստել կավի ածունի մեջ:

ԻՆՉՊԵՍ Ե ՎՈՐՈՇՎՈՒՄ ՀՈՍՈՆՔԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ

Հաճախ պատահում է, վոր դուք չեք իմանում, թե տվյալ հոսանքի աղբյուրի վրա բևեռն ե դրական և վորը՝ բացասական, թեպետ ձեր աշխատանքի համար չափազանց կարևոր ե իմանալ հոսանքի ուղղությունը շղթալի մեջ, Այսպիսի դեպքերում նախորոք անհրաժեշտ է վորոշել հոսանքի աղբյուրի բևեռները: Փորձերից միքանիսը, վոր դուք արել եք այս դաշնթացի սկզբում, ձեռ տալիս են բևեռները վորոշելու յեղանակները:


Անենք մի շարք նոր, պարզ փորձեր ևս, վորոնք բևեռները վորոշելու նոր յեղանակներ կտան ձեզ:

Փորձ I. Հոսանքի աղբյուրի հաղորդալարերի մաքրված ծայրերն իջեցնում ենք ծծմբաթթվի թույլ լուծույթ պարունակող բաժակի մեջ և դիտում ենք, թե լարերից վորի վրա ավելի շատ գաղ ե անշատվում:

Այն հաղորդալարը, վորի վրա ավելի շատ գաղ ե անշատվում, միացած ե հոսանքի աղբյուրի բացասական բևեռի հետ: Իմանալով, թե ցած ե հոսանքի աղբյուրի բացասական բևեռի հետ, յերբ նրա միջով հոսանք ե անցնում, դուք ինքներդ կարողանաք բացատրել բևեռները վորոշելու ավյալ յեղանակը:

Փորձ II. Բաժակի մեջ լցրեք մի քիչ հեղուկ շրեց, պատրաստված կալիում յոդիդի լուծույթով^{*)}: Հաղորդալարերն իջեցնելով շրեցի մեջ վորոշեցրեք, թե նրանցից վորի մոտ ե շրեցի գույնը փոխվում:

Փորձ III. Սպիտակ ծծան թղթի շերտերը թրջեցրեք սալպետրի լուծույթի մեջ, վորին միքիչ ֆենոլֆտալեյին^{**}) ավելացրեք: Թուղթը դրեք ապակու վրա և նրա վրայից ել հոսանքի աղբյուրի հաղորդալարերի ծայրերը (նկ. 44), Այն հաղորդալարի մոտ, վոր միացած ե մարտկոցի բացասական բևեռին, կառաջանա կարմիր գույնավորում:



Նկ. 44.

Փորձ IV. Թղթի շերտը թրջեցրեք կալիումի յերկաթային ցիանիտի աղի լուծույթի մեջ և դրեք ապակու վրա: Հոսանքի աղբյուրից յեկող հաղորդալարերին ամրացրեք յերկաթալարի կտորներ և նրանց ծայրերը դիպցըք թղթի շերտին: Հաղորդալարերից վորի մոտ կապույտ գույնավորում առաջացավ:

Կատարված փորձերը նորից ապացուցում են, վոր հոսանքն անցնելով զանազան լուծույթների միջով, տարրալուծում ե նրանց:

Բիբլած փորձերից կարելի յե ոգտվել դորձնականապես հոսանքի ուղղությունը վորոշելու համար:

ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՇՐՋԱ

Ելեկտրական եներգիայի աղբյուրը, ընդունիչը, վորն ելեկտրական եներգիան այլ տեսակի եներգիայի իւ փոխարկում, և հաղորդալարերը, վորոնք եներգիայի աղբյուրը միացնում են ընդունիչի հետ, կազմում են ելեկտրական շղթա:

*) Երեշը պատրաստվում է 2 գրամ կարտոֆիլի այսուհետ և 100 գրամ եռացող ջրից, վորի մեջ հետո լուծում են 1 գրամ կալիում յոդիդու:

**) Ֆենոլֆտալեյինի թուղթն աշխատանքի համար պատրաստվում են սպիտակ ծծան թղթը թրջելով սալպետրի լուծույթի մեջ: Յերբ թուղթը չորանում ե, կտրում են բարակ շերտերով և թացում փենոլֆտալեյինի սպիրտային լուծույթի մեջ: Աջատելիս թուղթը պետք է թրջել ջրով:

Գանի շղթան փակ է, նրա միջով հոսանք և անցնում: Բավկական են միայն վորուել տեղում շղթան կտրել «բանալ», հոսանքը դադարում է:

Վորպեսպի գեթ վորոշ չափով կարողանանք պարզել մնդ համար այս
լեռնույթները, վորոնք առաջանում են ելեկտրական շղթայում, կարե-
լի էն դրանք համեմատել այն լեռնույթների հետ, վորոնք տեղի են
ունենում 45-րդ նկարում պատեկերացված ջրաբաշխական սոցիլի մեջ:


Ա ջրհանը Ե ջրամբարից ջուրն ածում ե Յ ջրամբարի մեջ: Յ ջրամբարից դուրս ե գալիս մի խողովակ, վորի մեջ դրված ե Ծ տուրբինը: Այդ խողովակով անցնելիս՝ ջուրը պտտեցնում ե տուրբինը և Ո խողովակով թափվում Ե ջրամբարի մեջ, վորտեղից ջրհանի միջոցով դարձյալ վերադառնում ե Յ ջրամբարը:

Զուրը բարձրացնելու համար անհրաժեշտ ե ծախսել վորոշ քանակով լամփ և ներդիմա: Այդ եներգիան վերածվում է բարձրացված ջրի պոտենցիալ եներգիալին: Չուրը վորոշ ճնշման տակ ընկնելով տուրբինի անիվների վրա, ստիպում ե, վոր տուրբինն աշխատի, փոխանցելով նրան իր եներգիան: Թափված Չուրը նախկին բարձրության վրա հանելու համար պահանջվում է ջրհանք նոր աշխատանք, վորը դարձալու համար է եներգության ծախսման հետ:

ներգիակի ազբուրը հանդիսանում է
ջրհանն իւ շարժիչով, եներգիայի ըն-
դունիչը՝ տուրբինը, իսկ խողովակ-
ներն ել միացնում են եներգիայի աղ-
բուրն բնադրնիչի հետ:

Յերբ ա և Ե ծորակները բաց են,
ջուրը հոսում ե խողովակների միջով
և աշխատանք ե կատարում, իսկ յերբ
այդ ծորակներից թեկուզ մեկը փակ-
ված է, ջուրը չի հոսում և տուրբի-
նը գաղաքարում և աշխատելուց: Մո-
առափորսապես նույն բանն է ստաց-
վում նաև ելեկտրական շղթայի մեջ:
Ենիքիայի ազգուրն այստեղ ելե-
մենտն ե կամ ելեկտրակալանի մեքե-
նան: Այդ ազգբուրը հաստատուն մը-
ղում, կամ, ինչպես ելեկտրոտեխնի-

Նկ. 45. Ելեկտրական զղթայի ջրաւ
բաշխական մամուլը



կալի մեջ ընդունված ե ասել, «լարում» ե պահպանում, վորով շարժում ե եղեկտրականությունը: Բավական ե մի տեղում բանալ (կտրել, ընդհատել) շվետան, հոսանքին հնարավորություն չտալ շարժվելու և ահա ընդունիչը կդադարի աշխատելուց: Նմանությունը համարյա կատարյալ ե, ջրհանի աշխատանքի մեջ պարզ լիրենում ե, վոր ինչ-վոր

Եներգիա լե ծախսվում, լինի այդ մարդու թե գոլորշու աշխատանքի եներգիան, ելեմենտի մեջ ծախսվողը քիմիական եներգիան եւ:

Ստուգիչ հարցեր I յեկ II գլուխների վերաբերյալ

- Ի՞նչն ե կոչվում ելեկտրիֆիկացիա:
 - Ի՞նչ առավելություններ ունի ելեկտրական եներգիան, եներշիալի ալլ տեսակների համեմատությամբ:
 - Ի՞նչ նշանակություն ունի ելեկտրիֆիկացիան եներգիալի եժան տեսակների ոգտագործման համար:
 - Եներգիալի ի՞նչ եժան տեսակներ կան մեր Միության մեջ:
 - Ներկայումս Միության ելեկտրիֆիկացիալի գործում նվաճումներ մն նախահեղափոխական ժամանակի համեմատությամբ:
 - Ավարտված ե արդյոք այժմ Միության ելեկտրիֆիկացիան:
 - Վերտեղից և ի՞նչպես ե համում հոսանքն սպառողին:
 - Ի՞նչն ե կոչվում մագիստրալ:
 - Ի՞նչն ե կոչվում ելեկտրական շղթա:
 - Ի՞նչպես ե շինված կելլանշեյի եկմենտը:
 - Ի՞նչպես ե շինված գրպանի մարտկոցիկը:
 - Ի՞նչպես ե շինված ելեկտրական լամպը:
 - Ի՞նչն ելեկտրական լամպից ոդը դատարկում են:
 - Ի՞նչպես ե շինված կոթառը:
 - Վորմնք են կոչվում հոսանքի հաղորդիչներ և անհաղորդիչներ:
 - Ի՞նչպիսի հաղորդիչներ գիտեք դուք:
 - Թվեցեք այն անհաղորդիչները, վորոնք ձեզ հայտնի լեն:
 - Ի՞նչպես ե շինված բոլորալարը հոսանքն անցկացնելու համար:
 - Նկարեցեք լուսավորման ցանցի անջատիչը:
 - Ի՞նչպես պետք ե պտտել անջատիչը ցանցը միացնելիս:
 - Ի՞նչպես պետք ե պտտել անջատիչը ցանցն ընդհատելիս:
 - Ի՞նչն իզոլլացիան հեռացնում են հաղորդալարից, վերջինս գործիքին միացնելիս:
 - Ի՞նչպես կարելի լե իմանալ՝ շղթայի միջով հոսանք անցնում ե, իւ վոչ:
 - Հիշեցեք, թի դուք ի՞նչ փորձեր եք արել, վորոնց միջոցով կատելի յե հայտնաբերել հոսանքի ներկայությունը շղթայի մեջ:
 - Հոսանքն ի՞նչ ե անում այն հաղորդալարին, վորի միջով նանցնում ե:
 - Հոսանքն ուղղություն ունի՞ ի՞նչպես կարելի լե այդ ապացուցել:
 - Պղնձի արջասպի լուծութի հետ ի՞նչ ե կատարվում, լերը նըաբիջով հոսանք ե անցնում:
 - Ի՞նչպես ե վորոշվում հոսանքի ուղղությունը շղթայի մեջ:

29. Ի՞նչպես և գնում հոսանքն այն հաղորդալարի միջով, վոր միացնում և կեզան շէի ելեմնտի ըևեռները:
30. Ի՞նչ և կոչվում անող և կաթոդ:
31. Ի՞նչպես և շինված կապարն ակկումուլյատորը:
32. Ի՞նչ և կատարվում կապարն ակկումուլյատորի թիթեղների հետ նրան լցնելիս:
33. Ի՞նչպես են պատրաստում ակկումուլյատորի գործարանային թիթեղները:
34. Նշեցեք, թե տեխնիկայի մեջ վհրանեղ են կիրառվում ակկումուլյատորները:
35. Ինչմեմ և կայանում եղիսոնի ակկումուլյատորի առավելությունը կապարն ակկումուլյատորի համեմատությամբ:
36. Ի՞նչ եներգիայի հաշվին են աշխատում ակկումուլյատորները:
37. Կարելի՞ լի ելեմենտ պատրաստել յերկու միաժեսակ թիթեղներից:
38. Ի՞նչ պայմաններում ելեմենտը կարող և հոսանք տալ:
39. Ելեմենտների մեջ ի՞նչն և հանդիսանում եներգիայի աղբյուրը:

ՀՈՍԱՆՔԻ ԶԱՓՈԽՄԵՐԸ ՇՊԹԱՅԻ ՄԵՋ

ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ԵՆԵՐԳԻԱՅԻ ԶԱՓՈԽՄԸ

Եներգիայի այն քանակը, վորն ստանում և նախորդ զիսի 45-րդ նկարում պատկերացրած տուրբինը, կախված և թե տուրբինի միջով հոսող ջրի քանակից և թե այն ճնշումից, վորի տակ այդ ջուրը հոսում եւ Ցեթեցանկանաք վորոշել այդ տուրբինի հզորությունը, մենք պետք եւ վորոշենք, թե նա ի՞նչ աշխատանք եւ կատարում մի վայրկանում, իսկ զբա համար դարձաւ անհրաժեշտ և իմանալ մի վայրկանում տուրբինի միջով հոսող ջրի քանակը և այն ճնշումը, վորի տակ այդ ջուրը հոսում եւ:

Վորպեսպի հնարավոր լինի հաշվի առնել ելեկտրական գործիքների կատարած աշխատանքը, հաշվել նրանց հզորությունը, պետք եւ ծանոթանալ այն միավորների հետ, վորոնք գործ են ածվում ելեկտրոտեխնիկայի մեջ, լավ հասկանալ, թե ի՞նչ են չափում այդ միավորներով, և գտնել մտթեմատիկական այն բանաձևերը, վորոնք միմիանց հետ կապում են եներգիայի չափման ելեկտրական և մեզ ծանոթ ալ տեսակի միավորները:

ՀՈՍԱՆՔԻ ՈՒԺԸ

Ամենից առաջ հիշեցեք, վոր ձեր կատարած զանազան փորձերի ժամանակ գուշ ստանում ելիք հոսանքի վոչ հավասար աղղեցությունները, Միենույն լամպը յերբեմն ավելի պայծառ եր վառվում, յերբեմն ավելի թույլ Մագնիսական սլաքը հոսանքից խոտորվում եր կամ մեծ անկուռնով կամ փոքր, Քանի վոր այս յերկութներն այսպես կամ այնպես կապված են հոսանքի հետ, ապա կարելի լի յեղբակացնել, վոր հոսանքը մեր փորձերի մեջ միշտ միատեսակ չափով ուժեղ չի լինում, Ցեթեց ամպը մի գեպքում պայծառ եւ վառվում, իսկ մի այլ գեպքում թույլ կարելի լի մտածել, վոր առաջին դեպքում հոսանքն ավելի ուժեղ եւ,

քան լեռկրորդ դեպքում: Հոսանքներն իրար հետ համեմատել կարողանալու համար պետք է համեմատության վորոշ միավոր ընտրեն:

Գոյմանավորվել են հոսանքի ուժի միավոր համարել այն հոսանքի ուժը, զորն խիստակի յե մի վայրկյանում տնջատել պղնձի արշուափի լուծույթից 0,328 մգ պղինձ: Այդ հոսանքը կոչվում է մի ամպերի հոսանք:

Եթե կարականության այն քանակը, վորը 0,328 մգ պղինձ և անջատում պղնձի արջասպի լուծույթից, կոչվում է կուլոն: Այն հոսանքը, վորի ժամանակ մի վալրկյանի ընթացքում հոսում է մի կուլոն, հանգիսանում է մի ամպեր հոսանք: Յեթե է վալրկյանում հաղորդակարում անցնում է Շ կուլոն հոսանք, ապա հոսանքի ուժն ամպերներով հաշվար և $I = \frac{Q}{t}$.

Յեթե մի վալրկյանում անջատվում է վոչ թե 0,328 մգ, ապ 0,656 մգ պղինձ, ալդ նշանակում է, վոր անցնում է 2 ամպեր հոսանք և այնու Այլ կերպ ասած, իմանալով մի վալրկյանում անջատված պղնձի քանակը, մենք կարող ենք հաշվել հոսանքի ուժը: Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, վոր հոսանքի ուժը, ուժեղ հոսանք, բոլով հոսանք բառում վոչ գոչ գեղագում չպետք և հասկանալ տառացի կերպով: Այստեղ ուժի վոչ մի գաղափար չկա ճիշտ այնպես, ինչպես ուժի վոչ մի գաղափար չկա, յերբ ամբողջովին ծաղիկներով ծածկված խնձորենու մասին խոսելիս, գործ են ածում այսպիսի արտահայտություն: ռուժեղ ծաղիկ: Ինչպես «ուժեղ ծաղիկ» արտահայտության մեջ հառկացվում է ծաղիկների մեծ քանակություն, այնպես ել «հոսանքի ուժ» բառերով հասկացվում է եթե կարականության այն քանակը, վորոն անցնում է հոսանքով, վորոշ ժամանակամիջոցում:

Շատ թույլ հոսանքներ չափելու համար գործ և ածգում ամպերից 1000 անգամ փոքր միավոր՝ միլիմագիր:


Ածուխի սովորական շիկացման լամպը սպառում է մոտ 0,5 ամպեր: Կիսուապարատում վոլտյան աղեղը վերցնում է 40—50 ամպեր, ժոտավորապես 100 ամպեր վերցնում և տրամվալի վագոնը: Հոսանքները ենուախոսի մեջ մոտ 30 միլիմագիր մեծություն ունեն: Գիտության մեջ յերեքն պետք է լինում չափել հոսանքներ, վորոնք միլիտմագիրի հաղաքերորդկան մասին են հավասար:

«Ամպեր» բառը նշանակում է Բ տառով, միլիմագիրը՝ որեւով:

Ի՞նչՓես Ե ԶԱՓՎՈՒՄ ՀՈՍԱՆՔԻ ՈՒԺԸ

Հոսանքի ուժը չափվում է հատուկ գործիքներով — ամպերմետրներով, վորոնց մեջ, հոսանքի աղղեցության տակ, մի սլաք և շարժվում

ամպերների բաժանված ցուցնակի վրա: Այս գործիքների զանազան սխալեթների կառուցվածքի և աշխատանքի մանրամասնությունները տրվելու են հետո, իսկ այժմ մատնանշենք միայն մի սխալեմը՝ ջերմային ամպերմետրը: Այս գործիքի մեջ (նկ. 46) հոսանքը բաց և թողնը վորում ԲԲ բարակ լարի միջով, վորի միջնակետի վրա ամբացված



Նկ. 46. Զերմային ամպերմետր:

և բարակ մետաքսե թել: Այդ թելը փաթաթված է Ծ փոքր ճախարակի շուրջը և Ը զսպանակով պրկվելով (ձգվելով), ԲԲ լարի միջակեալ ձգում և (քայում ե) դեպի ցած: Հոսանքը բաց թողնելու ժամանակ լարը տաքանալով յերկարում է և նրա միջնակետը, ձգվելով մետաքսե թելից, ցած և իջնում: Թելն այդ ժամանակ պատում է ճախարակը և նրա հետ միասին՝ նրա վրա տեղավորված ոլաքը: Հոսանքն ինչքան ուժեղ է, այնքան ավելի շատ և տաքանում և կախ ընկնում լարը, վորի հետեւանքով թելն իջնում է և մեծանում և սլաքի թեքումը: Յեթե զպրոցում այդպիսի գործիք կա, դիտեցեք նրա կառուցվածքը: Յեթե չկա, փորձեցեք պատրաստել ինքներդ: Մեր հետազա աշխատանքների ժամանակ ոգտվելու լինք ալ սիստեմի գործիքներից: Նոր պատրաստվող ամպերմետրների վրա ցուցնակը գծվում է վորեւ տիպարացին ամպերմետրի ցուցնակի համեմատ: Առաջին ամպերմետրի ցուցնակն անհրաժեշտ է լեղել պատրաստել մետաղի այն քանակի համեմատ, վոր անջատվում և մետաղային աղից, նրա միջով հոսանքն անցնեցնելիս:

Ամպերմետրն ուրվագծերում պատկերացվում և այս նշանով՝ ի՞նչՓես Են ՈԳՏՎՈՒՄ ԱՄՊԵՐՄԵՏՐՆԵՐԻՑ

Դիտեցեք ձեզ տրված ամպերմետրը: Եղթայի մեջ մտցնելու համար ամպերմետրն ունի յերկու կամ յերեք սեղմակներ: Յեթե ամպերմետրի

վրա միայն լերկու սեղմակ կա, ապա նըս ցուցնակը միայն մի շարք թվեր ունի, իսկ լեթե լերեք՝ ապա ցուցնակը լերկու շարք թվեր ունի: Թվերի մի շարքը համապատասխանում է վորոշ սեղմակների մի զույգին, իսկ լերկորդ շարքը՝ սեղմակների մոտականություններ կան: Շատ հաճախ սեղմակներից մեկի մոտ դրված ե + նշանը, իսկ մյուսի մոտ — նշանը կամ վոչ մի նշան: Այդ նշանակում ե, վոր ամպերմետրի ուղիղ ցուցմունքների համար անհրաժեշտ ե անպայման + նշան ունեցող սեղմակը միացնել ելեմենտի կամ մարտկոցի + բևեռափ հետո Սխալ միացման ժամանակ ամպերմետրը կամ բոլորվին հոսանք չի ցուց տալիս կամ սխալ ցուցմունքները ետալիս: Յեթե պարզվի, վոր հոսանքը, վորվ դուք ոգտվում եք, չափազանց ուժեղ ե, և սլաքը դուքս ե գալիս ցուցնակի սահմաններից, այդ դեպքում անհրաժեշտ ե անմիջապես շրջալիք անշատել ամպերմետրը, վորովհետև այլապես նա կիշանա: Նախքան հոսանքի անցնելը՝ ամպերմետրի սլաքը պետք ե կանգնած լինի ցուցնակի 0-ի վրա: Յեթե նա 0-ի վրա չի կանգնած, ամպերմետրներից միքանի տեսակների մեջ գործիքի մի կողմի տակը կարելի լի թղթե կտորներ գարսել այնպես, վոր գործիքը պահանջված դիրքն ընդունի, և սլաքը կանգնի 0-ի վրա: Ձեր ձեռքի տակ գտնվող գործիքի հետ վարկելու վերաբերյալ նման ցուցմունքներ ձեզ կտա դաստուն:

ԼԱԲՈՐԱՏՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ № 3.

Աշխատանքի նպատակը. — Ուսումնասիրել հոսանքի ուժը ըլլայի տարբեր մասերում:


ԱՆՀՐԱԺԵՏ ԳՈՐԾԻՔՆԵՐ ՅԵՎ ՆՅՈՒԹԵՐ. — Նիկոլինի լար 1, 0,5 և 0,25 մմ արագություն, մասշտաբ, փայտե ձողաներ (բարակ տախտակներ) 4 հատ, յուրաքանչյուրը 2 սեղմակով, ամպերմետր, լեկլանչեյ 3 լեկմենտ կամ 2 ակկումուլյատոր, միացման համար հաղորդալարեր, տափակ բերան աքցաններ և ունելիներ:

Գործիքների նախապատրաստումը. — Վերցրեք մետաղալարի լերեք կտորներ, տարբեր տրամագծերով և 101-ական սանտիմետր լերկարությամբ: Այդ լարերի ծալքերին փոքրիկ ողակներ շինեցեք այն հաշվով, թիամբար կամ այլ տեղ, 1 և 2 լարերի միջև, և չափեցնեք հոսանքի ուժը:

4. Նույն բանն արեք, տեղափորելով ամպերմետրը 2 և 3 լարերի միջև:

ԲՈՒԺՄՈՒՆ կտան ձեզ հետազա աշխատանքների ժամանակ ոգտվել ձեր պատրաստած մետաղալարերից:

1. Շղթա կազմեցեք ձեր պատրաստած լերեք լարերից, ամպերմետրից և ելեմենտների մարտկոցից կամ ակումուլյատորից. միացման համար գործածելով, վորքան կարելի լի, լարերի կարճ կտորներ^{*)}: Այդ




Նկ. 47. Վերաբերում ե № 3 աշխատանքին:

բոլոր գործիքներն անհրաժեշտ ե այնպես միացնել, վոր հոսանքը հարութաբար անցնի շղթայի բոլոր մասերի միջով: Միացումն ուրվագծով բեն պատկերացված ե 49-րդ նկարում: Այդպիսի միացումը կոչվում է հաջորդական:

2. Գրի առեք հոսանքի այն ուժը, վոր ցուց ե տալիս ամպերմետրը:

3. Ամպերմետրը տեղափոխեցեք շղթայի մի այլ տեղ, 1 և 2 լարերի միջև, և չափեցնեք հոսանքի ուժը:

4. Նույն բանն արեք, տեղափորելով ամպերմետրը 2 և 3 լարերի միջև:



Նկ. 48. Վերաբերում ե № 3 աշխատանքին:

Նկ. 49. № 3 խողը գործիքների միացման ուրվագիծը:


5. Տեղափորեցեք ամպերմետրը ելեմենտների միջև և նորից չափեցեք հոսանքի ուժը:

^{*)} Շղթա կազմելու մարտկոցից յեկող հաղորդալարերից մեկը դեռ թողեք առանց միացնելու Սյդ հաղորդալարը մացրեք շղթայի մեջ միայն այն ժամանակ, յերե պիտի չտվում կատարեք:

Հոսանքի ուժի համար նշանակություն ունի այն տեղը, վորածեղ մտցված և ամպերմետրը՝ Շղթալի տարբեր մասերում հոսանքի ուժը տարբերվելու եւ

Խնդիրներ յեզ հարցեր

